

ԳՐԱԲԱՐՅԱՆ ԲՆԱԳՐԵՐԻ ԴԱՍԱԿԱՆ  
ԹԱՐԳՄԱՆԻՉԸ

(Ա. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ)

Հոդվածների ժողովածու

ԵՐԵՎԱՆ

2014

Հողվածների ժողովածուն տպագրության է երաշխավորել Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ  
բանասիրական ֆակուլտետի խորհուրդը:

*Ժողովածուն ներկայացնում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական  
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Արսենի Աբրահամյանի Եզնիկ Կողբացու  
«Եղծ աղանդոց» և Ստեփանոս Օրբելյանի «Մյունիքի պատմություն» գրքերի աշ-  
խարհաբար թարգմանության դասականությունը: Ժողովածուն օգտակար է  
բանասերներին, պատմաբաններին, հայ գրականության և պատմության ուսուցիչներին,  
ուսանողությանը:*

Նվիրվում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման  
մեթոդիկայի ամբիոնի երկարամյա վարիչ  
**Աշոտ Արսենի Աբրահամյանի**  
ծննդյան 95-ամյակին

### **ԵՐԿՈՒ ԽՈՍՔ**

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Արսենի Աբրահամյանը երկար տարիներ գլխավորել է Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը: Նշանավոր լեզվաբանի գիտական ժառանգության մեջ առանձին բաժին են կազմում գրաբարին նվիրված նրա աշխատությունները, գրաբարի ընտիր դասագիրքը, որով հայոց հնամենի լեզվի մեջ հմտացել են մի քանի սերունդներ և դեռ պետք է հմտանան: Ա.Աբրահամյանը հայ ընթերցողին է նվիրել գրաբարից կատարված երկու դասական թարգմանություններ, որոնք մտել են այդօրինակ թարգմանությունների ոսկե ֆոնդի գանձարանի մեջ: Առաջինը Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» արևելահայ աշխարհաբար ընտիր թարգմանությունն է (1970թ.), երկրորդը՝ Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը» (1986թ.), որը ցավոք հրատարակվեց նրա մահվանից մեկ տարի անց: Երկու թարգմանությունները իրենց կատարման մակարդակով ու գիտականությամբ կարող են դրվել մեր մեծերի՝ Հրաչյա Աճառյանի, Մանուկ Աբեղյանի, Ստեփանոս Մալխասյանցի, Երվանդ Տեր-Մինասյանի թարգմանությունների կողքին:

Աշոտ Աբրահամյանի թարգմանությունների առաջաբանները և ծանոթագրությունները ընդգրկում են հայ և միջազգային հայագիտության բոլոր անհրաժեշտ տվյալները և դարձել են XX դարի երկրորդ կեսի հայագիտության նվաճումներից:

*Ա. Դոլուխանյան*

## **A Few Words**

Corresponding Member of the National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS RA), Doctor of Philology, Professor Ashot Arsen Abrahamyan for many years had been at the head of the Chair of the Armenian Language and its Teaching Methodology at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Among the scientific heritage of the famous linguist the scientific works dedicated to the Old Armenian (Grabar) make a separate section together with the wonderful Manual of Grabar by means of which several generations acquired skills in Old Armenian and still have to. A. Abrahamyan presented the Armenian reader with two classical translations from Grabar which entered the treasury of the golden fund of similar translations. The first one is the unique translation of “The Refutation of the Sects” by Eznik Koghbatsi into Eastern Ashkharhabar (New Armenian, 1970), and the second is the “The History of Syunik” by Stepanos Orbelyan (1986), which, was, unfortunately, published a year after his death. Both these works for their high quality translation and scientific value can rightly be put side by side with the translations of such giants as Hrachya Acharyan, Manuk Abeghyan, Stepanos Malkhasyan, Yervand Ter-Minasyan.

The Introductions and notes of Ashot Abrahamyan’s translations include all the necessary facts of both Armenian and International Armenology which have become important Armenological achievements of the second half of the XX century.

*A. Dolukhanyan*



**ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ**  
*Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ  
հայ հին և միջնադարյան  
գրականության ամբիոնի վարիչ,  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր*

**ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑԻ» ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ**

Եզնիկ Կողբացին հինգերորդ դարի հայ մատենագրության երևելի դեմքերից է: Նրանից մեր օրերն են հասել «Եղծ աղանդոցը», խրատները և մի քանի կրոնական հարցեր քննող գործեր:

Հայ մատենագրության մեջ Եզնիկ Կողբացին գնահատվել է ըստ արժանվույն: Հինգերորդ դարի մատենագիրները նրա մասին խոսում են հարգանքով: Առաջինը նրան հիշատակում է Կորյուն վարդապետը «Վարք Մաշտոցի» երկում: Հենց Կորյունից էլ հայտնի է դառնում, որ Եզնիկը Արարատյան գավառի Կողբ գյուղից է, եղել է սուրբ Սահակ Պարթևի և սուրբ Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից, նրանց հրահանգով մեկնել է Ասորոց Եդեսիա քաղաքը՝ սուրբ հայրերի ավանդությունները ասորերենից հայերեն թարգմանելու, այնուհետև գնացել է Հունաստան և Բյուզանդիոնում հունարենի մեջ կատարելագործվելուց հետո կարգվել հելլենական լեզվի թարգմանիչ<sup>1</sup>: Նույն Կորյունը վկայում է, թե Եզնիկ Կողբացին Սահակ Պարթևի հետ մասնակցել է Աստվածաշնչի Հին կտակարանի թարգմանությանը, միաժամանակ ավելացնում, թե այլ թարգմանություններ էլ է կատարել<sup>2</sup>:

Եզնիկին որպես հինգերորդ դարի հայ լուսավորչական մեծ շարժման կարկառուն դեմք ներկայացնում է նաև Մովսես Խորենացին՝ գրեթե հարազատորեն կրկնելով այն նույն փաստերը, որոնք կային Կորյունի գրքում, միայն հավելելով Եզնիկի նկատմամբ եղած ինչ-որ նախանձի մասին<sup>3</sup>:

Եզնիկ Կողբացու մասին գրեթե միննույն փաստն են կրկնում հինգերորդ դարի ուրիշ երկու պատմիչներ՝ Եղիշեն և Ղազար Փարպեցին, որոնք վկայում են, թե այլ

<sup>1</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, Աշխարհաբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով Մ.Աբեղյանի, Երևան, 1962, էջ 118:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 119:

<sup>3</sup> Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածությունը Մ.Աբեղյանի և Ա.Հարությունյանի, Երևան, 1991, էջ 341:

մատենագիրը մասնակցել է 449-ին Արտաշատ քաղաքում գումարված ժողովին, որի ժամանակ և կազմվեց Հազկերտ Երկրորդի դավանափոխության պահանջին տրված պատասխան «Թուղթը»՝

## Եղիշե

Եզնիկ եպիսկոպոս Բագրևանդայ:<sup>4</sup>

### Ղազար Փարպեցի

Տէր Եզնիկ՝ Բագրևանդայ եպիսկոպոս:<sup>5</sup>

Եզնիկ Կողբացու «Եղծը» և ընդհանրապես հինգերորդ դարի լուսավորչական հզոր շարժումը, որ առաջացավ Մեսրոպ Մաշտոցի հայոց այբուբենը ստեղծելուց հետո, հետագա դարերում դիտվել է որպես հայ ժողովրդի հոգևոր կյանքի այնպիսի վերածնունդ, որը ազգի ապագայի առաջնիչ ուժն էր լինելու: Այս գիտակցման ամենապերճախոս վկայությունը գտնում ենք 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» գրքում: Կ.Գանձակեցին հինգերորդ դարի հայ մատենագիրներին ու թարգմանիչներին համարում է ազգի փրկիչներ, որոնք իրենց գործունեությամբ դարձան մանուկների դաստիարակներ, երիտասարդներին բարի օրինակներ, կույսերի համար զարդ և ամուսնացածներին օրենք, ծերերին սփոփիչ և տկարներին մխիթարիչ, սխալ ուղիով ընթացողներին ճիշտ ճանապարհի բերողներ, ծուլերին աշխատասիրություն և եռանդ ներարկողներ, ուսումնաստենչ դարձնողներ: Եվ ամենակարևորը՝ հինգերորդ դարի մատենագիրներին Կ.Գանձակեցին անվանում է ապագան գուշակող մարգարեներ. «Սոքա ոչ միայն թարգմանիչք, այլ և՛ վարդապետք, և՛ ուսուցիչք, և՛ մարգարէք պատմողք ապագայիցն»<sup>6</sup>: Ահա այսօրինակ գործիչների շարքում նա հիշում է Եզնիկ Կողբացուն, որի երկերը շատ օգտակար են բոլոր լսողների համար. «Եւ Եզնակ խօսս յոլովս եթող յօգուտ լսողաց»<sup>7</sup>:

Եզնիկի «Եղծ աղանդոց» աշխատությունը բնագրով առաջին անգամ տպագրվել է 1762-1763թթ. Զմյուռնիայում Հակոբ Նայյանի առաջաբանով: Խորագիրն է եղել՝ «Երանելուն Եզնակայ Կողբացուց Հայոց Վարդապետի, Աշակերտի Սրբոյն Մեսրոպայ մեծի թարգմանչի, Արտադրութիւն ընդդէմ զանազան հերձուածոց»<sup>8</sup>: Նույն հատորի մեջ լույս են տեսել նաև Եզնիկ Կողբացու խրատները: Այս տպագրության համար հիմք է դարձել 1280թ. Գլաձորում գրված մի ձեռագիր, որը ժողովածու է, և նրանում զետեղված են աստվածաբանական բովանդակություն ունեցող երկեր: Երկար ժամանակ այս ձեռագիրը կորած է համարվել, մինչև որ այն Էջմիածնի Մատենադարանում հայտնաբերել է նշանավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը: Այժմ ձեռագիրը պահվում է

<sup>4</sup> Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 54:

<sup>5</sup> Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը Գ.Տէր-Մկրտչյանի և Ստ.Մալխասյանցի, Երևան, 1982, էջ 100:

<sup>6</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Աշխատասիրությամբ Կ.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 27:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>8</sup> Տէ՛ւ Ն.Ա.Ոսկանյան, Ք.Ա.Կորկոտյան, Ա.Մ.Սավայյան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Երևան, 1988, էջ 452:

Մաշտոցի անվան Մատենադարանում՝ թիվ 1097: Բովանդակությունը հետևյալն է. «Եպիփանու Ճառք: Առաջաբան թագաւորութեանց: Եփրեմի Մեկնութիւն Սամուէլի: Մեկնութիւն Թագաւորութեանց, Իբր ամենու, Յետուայ և Դատաւորաց: Եզնկայ Կողբացոյ Եղծ աղանդոց: Ի Դատաւորաց մեկնութենէ»<sup>9</sup>:

Եզնիկի «Եղծ աղանդոց» երկի արևելահայերեն լեզվով թարգմանիչ Աշոտ Աբրահամյանը իր թարգմանության առաջաբանում նկատում է. «Մեզ է հասել Եզնիկի երկի միայն մեկ ձեռագիր, որն այժմ խնամքով պահվում է Երևանի Մաշտոցյան մատենադարանում՝ 1097 թվահամարի տակ»<sup>10</sup>:

Հինգերորդ դարի հայ մատենագրի գլուխգործոցը շատ մեծ հետաքրքրություն է առաջացրել Եվրոպայի հայագետների ու արևելագետների շրջանում: Ամենից առաջ այն արժանացել է ֆրանսիացի հայագետների ուշադրությանը: 1853 թվականին Լ.Ֆլորիվալը այն թարգմանել է ֆրանսերեն: Այդ թարգմանությունը հաջողված չի եղել. «Այս թարգմանությունը դժբախտաբար խիստ սխալաշատ է ու Եզնիկի գրքի արժեքի մասին տալիս է շատ անկատար գաղափար» („Cette version est malheureusement fort infidèle, et ne peut donner qu’une idée très-imparfaite de la valeur du livre d’Eznig”)<sup>11</sup>:

Վիկտոր Լանգլուան հաղորդում է, թե Եզնիկը Սահակ Պարթևի հետ նորից է թարգմանում Հին կտակարանը հունարենից, որը մինչ այդ հայերն ունեին թարգմանված ասորական պեշիթո (peshito) բնագրից:

Ֆրանսիացի հայագետը հիացական խոսքեր է գրել Եզնիկ Կողբացու բնութագրում. «V դարի Հայաստանի առավել մեծանուն մատենագիրներից մեկը աներկբա Եզնիկ Կողբացին է՝ Բագրևանդի եպիսկոպոսը, Սուրբ Սահակի և Սուրբ Մեսրոպի աշակերտը» („Un des plus illustres écrivains qu’ait produits l’Arménie au V<sup>e</sup> siècle est sans contredit Eznig de Gogh, évêque de Pakrévant, et disciple de S.Sahag et de S.Mesrob”)<sup>12</sup>.

Վ.Լանգլուան Եզնիկի «Եղծ աղանդոցի» երկրորդ գրքի «Եղծ քեշին պարսից» 11 պարագրաֆները տպագրել է «Հայ պատմիչների ժողովածուի» II հատորում, որովհետև նրանում պարունակում են կարևոր տվյալներ գրադաշտական կրոնի վերաբերյալ, այդ մասին փաստեր են հաղորդում նաև V դարի պատմիչներ Եղիշեն ու Ղազար Փարպեցին: Զրադաշտական կրոնի խնդիրը ֆրանսիական ու եվրոպական արևելագետների մոտ 19-րդ դարի երկրորդ կեսին խիստ արդիական էր, և հայագետը մի հատորի մեջ է հավաքել հայ մատենագիրների հաղորդածը, որը կօգներ մագդեգական կրոնի ուսում-

<sup>9</sup> Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965, էջ 474:

<sup>10</sup> Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Աղանդների հերքումը, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 26:

<sup>11</sup> V.Langlois, *Collection des historiens anciens et modernes de l’Arménie*, t. II, Paris, 1869, p. 372.

<sup>12</sup> Նույն տեղում, p. 371.



նասիրությանը, որն «այնքան քիչ ուսումնասիրված և այնքան անծանոթ է» («...si peu étudiée et si peu connue»)<sup>13</sup>.

XVIII դարի վերջին քառորդին Անկետիլ Դյուպերոնի Ավեստայի բնագիրը հրատարակելուց հետո ֆրանսիացի հայագետները առավել մեծ արժեք տվեցին Եզնիկ Կողբացու, Մովսես Խորենացու, Եղիշեի և Ղազար Փարպեցու գրքերին, որովհետև նրանցում կային լրացուցիչ փաստեր գրադաշտական կրոնի վերաբերյալ: 1818 թվականին այդ խնդիրներին անդրադարձ ունի ֆրանսիական հայագիտության հիմնադիր Ժ.Ա.Սեն-Մարտենը իր «Հիշատակարաններ Հայաստանի պատմության և աշխարհագրության» հետազոտության առաջին հատորում:<sup>14</sup>

1881 թվականին Փարիզում լույս է տեսնում Ավեստայի գիտաքննական բնագիրը ընդարձակ առաջաբանով և շատ հարուստ ծանոթագրություններով: Հետազոտության հեղինակը՝ պրոֆեսոր Բ. դը Հառլեն, առաջաբանում շատ է կարևորում V դարի հայ պատմիչներ Մովսես Խորենացու և Եղիշեի պատմություններում հաղորդված փաստերը գրադաշտական կրոնի վերաբերյալ: Նկատենք, որ Ավեստայի գիտական այս բնագրում իսպառ բացակայում են բոլոր այն փաստերը, որոնք հաղորդում են V դարի հայ պատմիչները գրադաշտական կրոնի վերաբերյալ:<sup>15</sup>

Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» նկատմամբ հետաքրքրությունը շարունակվում է XX դարում: Մեծանուն հայագետներ Անտուան Մեյեի և Ֆրեդերիկ Մակլերի հանձնարարությամբ Լուի Մարիեսը զբաղվում է Եզնիկի «Եղծ աղանդոցի» աղբյուրների քննությամբ և իրականացնում է ֆրանսերեն նոր թարգմանություն՝ զուգադրելով բավականին փոփոխված գրաբար բնագիրը:<sup>16</sup> Եզնիկ Կողբացու գիրքն ամբողջությամբ թարգմանվել է գերմաներեն, իտալերեն, ռուսերեն: Ռուսերեն թարգմանության հեղինակը Վ.Կ.Չալոյանն է, որն իր գործին կցել է առաջաբան և ծանոթագրություններ: Նա «Եղծ աղանդոց» վերնագիրը թարգմանել է „Книга опровержений (О добре и зле)”. Թարգմանիչը համոզված պնդում է, թե Եզնիկի երկը մեզ չի հասել իր ամբողջության մեջ.

„Цельность „Книги опровержений” Езника в том виде, в каком она представлена в единственной рукописи Ереванского Матенадарана под № 1097 (по списку Кариняна № 1111), вызывает определенное сомнение. Есть основание предполагать, что произведение Езника дошло до нас не в полном виде, поскольку местами оно обрывается, местами явно отсутствует внутренняя последовательность и т. д. Кроме того, сочинение Езника имеет

---

<sup>13</sup> Նույն տեղում, p. 273.

<sup>14</sup> Sté u J.A.Saint-Martin, *Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. I, Paris, 1818, p. 271-276.*

<sup>15</sup> Sté u Avesta, *Livre sacré du zoroastrisme, Paris, 1881.*

<sup>16</sup> Sté u Eznik de Kolb De Deo, *Paris, 1959.*

свои литературные источники, вернее, в нем имеются заимствования в виде отдельных отрывков из произведений греческих и сирийских авторов»<sup>17</sup>.

Թարգմանության առաջաբանում Վ.Չալոյանն իրավացիորեն շեշտում է, թե քրիստոնեության ընդունման շնորհիվ Հայաստանում ստեղծվեց մաշտոցյան այբուբենը և պետությունն իր վրա վերցրեց հոգևոր ու մտավոր կյանքի զարգացումը. միաժամանակ Եզնիկի գիրքը ամրապնդում էր հայոց եկեղեցու միասնականությունը:

1951 թվականին Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս Այրեսում տոնվում է Ավարայրի հերոսամարտի 1500-ամյակը, ու այդ առիթով հրատարակվում է «Եղծ աղանդոցի» արևմտահայերեն թարգմանությունը: Այդ թարգմանության առաջաբանում նշված է «Եղծ աղանդոցի» գրվելու հավանական թվականը. «Եղծ Աղանդոցի» խմբագրության թվականը կնշանակվի 441-448, երբ ինք կգտնվեր արդեն պատասխանատու պաշտոնի գլուխ: Եպիսկոպոսն էր Բագրևանդա»<sup>18</sup>:

Պատահական չէ, որ «Սրբոց Վարդանանց դյուցազնամարտին 1500-ամյակ հիշատակին» հրատարակվեց հենց Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը»: Նվիրված լինելով հայ եկեղեցու կրոնական շահերը պաշտպանելու գործին, այն միաժամանակ եղել է ազգային-ազատագրական պայքարի երաշխիք ու հզոր զենք: Եզնիկի գիրքը չի ընդունում իր ազգի ստրկանալը որևէ բռնի ուժի առաջ. «Եվ կամ՝ երբ ավազակախումբը արշավում է երկիրը՝ մարդկանց կողոպտելու և կոտորելու համար, թող գորք չհավաքեն ու իրար ետևից գնդեր չկազմեն՝ երկրից ավազակներին դուրս քշելու համար, այլ թող պատճառաբանեն, թե «երկրի ճակատագիրն է ավազակից կոտորվել, մենք ինչն՝ պիտի դեմ գնանք ճակատագրին»: Բայց գորքեր գումարելով և երկրից թշնամուն դուրս վնդեղով՝ ցույց են տալիս, որ կոտորածները ճակատագրի ինչ-որ սահմանումով չեն տեղի ունենում, այլ ավազակի բռնությամբ, որը գալով անհագաբար կոտորում է ժողովրդին, զրկում ունեցվածքից»<sup>19</sup>:

Արևմտահայ թարգմանության հեղինակը հույս է հայտնում, որ իր թարգմանությունը խթան կդառնա նոր, առավել կատարյալ թարգմանության համար, որը կունենա առավել գիտական առաջաբան ու ծանոթագրություններ. «Ցանկալի է, որ խթան մ՛ըլլա տալու ավելի կատարյալը թարգմանության, ավելի ընդարձակ և սպառիչ ներածականով մը: Այսպիսի ձեռնարկ մը մենք պիտի նկատենք նույնիսկ վարձատրություն մեր այս շատ համեստ աշխատանքին»<sup>20</sup>:

Այս ցանկության կատարյալ պատասխանը եղավ 1970 թվականին «Հայաստան» հրատարակչության տպագրած «Եղծ աղանդոցի» արևելահայ թարգմանությունը, որն

---

<sup>17</sup> *Езник Кохбацци, Книга опровержений (О добре и зле), Перевод, предисловие и примечание В.К. Чалояна, Ереван, 1968, с. 9.*

<sup>18</sup> *Եզնիկ, Եղծ աղանդոց, Պուենոս Այրես, 1951:*

<sup>19</sup> *Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, էջ 109:*

<sup>20</sup> *Եզնիկ, Եղծ աղանդոց, էջ ԺԶ:*

իրականացրեց գրաբարի բացառիկ գիտակ Աշոտ Արսենի Աբրահամյանը՝ կցելով իր այս կարևոր ձեռնարկին գիտական հրատարակությանը պատշաճող բոլոր անհրաժեշտ բացատրություններն ու հիմնավորումները: Աշոտ Աբրահամյանի թարգմանության ներածությունն ունի հետևյալ վերնագիրը՝ «Եզնիկ Կողբացին և իր գործը»: Այս խորագրի տակ կան հետևյալ ենթավերնագրերը՝

ա) Կյանքը,

բ) «Եղծ աղանդոցը» և նրա ստեղծման հասարակական – քաղաքական պայմանները,

գ) «Եղծ աղանդոցում» արծարծվող հիմնական հարցերը,

դ) Լեզուն և ոճը,

ե) Աղբյուրների հարցը,

զ) Ձեռագիրը և տպագրությունները,

է) Թարգմանությունները,

ը) Եզնիկին վերագրվող այլ երկերի հարցը:<sup>21</sup>

Աշոտ Աբրահամյանն այն միտքն է հայտնել, թե ցարդ բացի «Եղծ աղանդոցից» Եզնիկից ոչ մի այլ երկ չի հասել. «Անշուշտ Եզնիկի նման մեծատաղանդ մատենագիրը չէր կարող սահմանափակվել միայն մեկ ինքնուրույն երկով: Սակայն, բացի «Եղծ աղանդոցից», մեզ ուրիշ ինքնուրույն երկ չի հասել: Առայժմ ստիպված ենք բավարարվելու «Եղծ աղանդոցի» հմայքով»<sup>22</sup>:

Եզնիկ Կողբացու գրաբար բնագիրը տպագրվել է մի քանի անգամ և ինչպես հավաստիացնում է Աշոտ Աբրահամյանը, այն «մինչև անգամ դասագրքի դեր է կատարում գրաբարի ուսուցման գործում»<sup>23</sup>:

Աշոտ Աբրահամյանի ներկայացրած «Մատենագիտական համառոտ ցանկում» նշված են 57 անուն աղբյուրներ: Դրանց մեջ բացի գրաբար, արևմտահայերեն և արևելահայերեն աղբյուրների կան ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն գրքեր: Լայնորեն օգտագործված են նաև պարբերական հանդեսներում տպագրված նյութեր, ինչպիսիք

---

<sup>21</sup> Եզնիկ Կողբացու անունով հասել են կրոնական բովանդակություն ունեցող մի շարք գործեր, որոնք պահպանված են ձեռագիր «Ժողովածուներում»: Մաշտոցի անվան Մատենադարանի «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց» Բ հատորում (Երևան, 2004, էջ 994, N 497, ԺՈՂՈՎԱԾՈՅ) կարդում ենք. «7. 474ա – 7ա Հարցումն Արձանա թագաւորի և պատասխանի Եզնկա վարդապետի Կողբացոյ – Արձան ասէ. «Զինչ է կրօնաւորութեան կարգն... որ վասն Աստուծոյ կամի ճզնել՝ յաստուածապիրացն զպաշտօնն»: Նմանատիպ գործեր կան նաև Մատենադարանի բազմաթիվ այլ ձեռագրերում. (Տէ՛ս Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965, էջ 1487):

<sup>22</sup> Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, էջ 30:

<sup>23</sup> Նույն տեղում: Ի դեպ, Աշոտ Աբրահամյանը ասպիրանտուրայում ինձ և հետագայում գրաբարի դասախոս դարձած Գուրգեն Մանուկյանին գրաբար էր սովորեցնում հենց Եզնիկի «Եղծի» գրաբար բնագրով – Ա.Դ.:

կան հետևյալ ամսագրերում՝ «Բազմավեպ», «Հանդես ամսօրեայ», «Մասիս», «Էջմիածին», «Պատմաբանասիրական հանդես»:

Թարգմանիչը ստեղծել է նաև ծանոթագրությունների շատ հարուստ գանձարան: Դրանք թվով 495-ն են և խորապես նպաստում են այս եզակի աստվածաբանական ու փիլիսոփայական երկի խորքային յուրացմանը: Ծանոթագրություններում Ա.Աբրահամյանը հաճախ է անդրադառնում Լ.Մարիեսի հրատարակած գրաբար բնագրի խնդիրներին ու վերջինիս Եզնիկի օգտագործած աղբյուրների բացահայտմանը:

Լ.Մարիեսի՝ Եզնիկին նվիրված աշխատությանը հանգամանալի անդրադարձ ունի հռչակավոր հայագետ Նիկողայոս Ադոնցը: Նրա հետազոտությունը կոչվում է «Քննական նշմարներ Եզնիկի մասին» (Լ.Մարիեսի աշխատության առթիվ):

Ուշագրավ է այն գնահատականը, որ Ադոնցն արժանացնում է Եզնիկին. «Հին մատենագիրների շարքում Եզնիկ Կողբացին այն բացառիկ դեմքերիցն է, որ պահել է գոնե ցայժմ իր ավանդական հռչակը ամուր ու անբասիր»:

...Եզնիկը մնացել է անխոցելի և ամեն տարակուսանքից վեր: Չէ թե միայն ոճի և բովանդակության կողմից, այլև հավաստիության տեսակետից Կողբացու փոքրիկ երկը հաշվում է հայ գրականության պարծանք»<sup>24</sup>:

Եզնիկի «Եղծ աղանդոցը» բացի աստվածաբանական – փիլիսոփայական երկ լինելուց, ունի ճանաչողական մեծ արժեք. նրա միջոցով այսօր ծանոթանում ենք V դարի հայի հնագույն հավատալիքներին, ազգագրական սովորություններին: Ընդունված կարծիք է, որ նրանում առկա են նաև հինավուրց բժշկության որոշ դեղատոմսեր: Չարի և բարու փոխհարաբերությունը ներկայացնելիս Եզնիկը թվարկում է մի շարք բույսեր, որոնք նայած գործածելու ձևին և ժամանակին կարող են լինել և՛ բուժիչ, և՛ մահվան պատճառ: Աշոտ Աբրահամյանը ի թիվս այլ բացատրությունների տալիս է նաև այդ բույսերի ստույգ նկարագիրը: Բերենք չորս օրինակ այդ բացատրություններից.

«119 Բառացի՝ «Մանրագորը եթե մեկը առանձնակի ուտի...»: «Մանրագոր» բառը ձեռագրում «մանրագոյրն» ձևով է («լոկ»-ն էլ՝ «լոյկ»): Հրատարակիչները սրբագրել են «մանրագոր» (հոդով): Մանրագորը մորմագգիներին պատկանող թունավոր բույս է (խաշխաշ, աֆիոն): (էջ 60):

120. Հազարը զամբյուղավորների կարգին պատկանող ուտելի բույս է: Եզնիկի երկի՝ Զմյուռնիայի հրատարակության մեջ «հազար»-ի կողքին փակագծում նշված է «որ է մառօլ»: Իսկ վերջինս հունարեն է: (էջ 60):

121. Մոլախինդը հովանոցավորների կարգին պատկանող թունավոր բույս է: Բնագրում բառը գրված է «մոլախինտ» («մոլախինտո») ձևով: Մատենագրության մեջ ավանդված է «մոլախինդ», «մոլեխինդ», «մոլէխինդ» ձևերով, կա և «խնդամոլի»: «Նոր բառգիրք...»-ը հիմնականն ընդունում է «մոլախինդ» ձևով: (էջ 60):

---

<sup>24</sup> Ն.Ադոնց, *Երկեր հինգ հատորով*, Բ, Երևան, 2006, էջ 131:

122. Կաղանչանը բույս է, որն ունի բազմաթիվ տեսակներ: Ըստ Եզնիկի՝ նրա մի տեսակը, առանձին վերցված, թունավոր է, իսկ խառնուրդով՝ բուժիչ է: Գ.Խաչատրյանն իր թարգմանության մեջ տալիս է «Կաղանչան» ձևով, իսկ գրաբարի մասում բառը ուրիշ բառերի հետ դուրս է մնացել բնագրից (անդ, էջ 32): (էջ 60)»<sup>25</sup>:

Եզնիկ Կողբացու երկը գրված է հարուստ բառապաշարով, դիպուկ համեմատություններով, որը տեղ-տեղ վերաճում է գեղարվեստականության՝ բոլորովին չիջեցնելով կուռ տրամաբանության թափը: Զրադաշտական կրոնի հատվածում կան բազմաթիվ ծիսական ու կրոնական մանրամասներ, որոնց աշխարհաբար համարժեքները գտնելը բոլորովին էլ հեշտ չէ. թարգմանչից պահանջում է ն՝ գրաբարի գերազանց իմացություն, ն՝ արդի արևելահայերենի հարուստ բառապաշարի քաջիմացություն: Թե միջազգային հայագիտության և թե ազգային բանասիրության մեջ Եզնիկ Կողբացու երկի լեզուն և ոճը համարվել է «ոսկեդենիկ»: Աշոտ Աբրահամյանի արևելահայերեն թարգմանությունը պահպանել է Եզնիկի երկի ոճի ողջ հմայքը: Բերենք երկու օրինակ.

### Գրաբար

Այլ նա աւասիկ իբրեւ զկառս իմն լծեալ և չորից երիվարաց զաշխարհս տեսանեմք, ի ջերմութենէ ի ցրտութենէ ի ցամաքութենէ և ի խոնաւութենէ. և զօրութինն իմն ծածուկ կառավար, որ զչորս կագեցողսն ընդ միմեանս ի հաշտութեան և ի հաւանութեան պահեալ նուաճէր: Ամենայն կառք ի համազգեաց երիվարաց լծին, բայց միայն այսց կառաց որ ի չհամազգեաց լծեալ են. և որ ի համազգեացն լծեալ են՝ երբեմն սայթաքին, երբեմն օձտեն և ի տագնապի զկառավարն և զանձինս կացուցանեն. և երբեմն խորտակուան իսկ կառացն գործեն. և յորժամ ողջ կառքն իցեն, և ողջ կառավարն, և վարժ երիվարքն, ուշ եղեալ ի հանդէպ երեսացն և եթ արշաւին. և այս կառք զարմանալիք ի հակառակ և յաննման երիվարաց լծեալ և ծածուկ ձեռամբ ուղղեալք. ոչ ի միմիայն կողմն ի հանդէպ երեսացն և եթ արշաւին, այլ յամենայն կողմանս վարգին, և ընդ հանուր արշաւին, և ընդ բնաւս սլանան, և ամենայնի բաւական են: Յորժամ ընդ արեւելս ընթանան, չէ ինչ արգել՝ թէ ընդ արեւմուտս ոչ արշաւիցին, և յորժամ ընդ հիւսիսի վարգին, չէ ինչ արգել՝ թէ ընդ հարաւ ոչ սուրայցեն. զի ձեռն կառավարին բաւական է յամենայն կողմանս դիմեցուցանել, և ընդ չորս անկիւն տիեզերաց արշաւեցուցանել:

### Աշխարհաբար

Եվ ահա տեսնում ենք այս աշխարհը ինչպես մի կառք՝ լծված չորս երիվարներով՝ տաքությամբ, ցրտությամբ, չորությամբ ու խոնավությամբ: Եվ կա կառավարող մի զաղտնի զորություն, որն այդ չորս հակառակորդները հաշտ ու խաղաղ պահելով,

<sup>25</sup> Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, էջ 206:

ենթարկում է իրեն: Բոլոր կառքերը նույնատեսակ երիվարներով են լծվում, բացի այս կառքից, որը ոչ նույնատեսակներով է լծված: Եվ նրանք, որոնք նույնատեսակներով են լծված, (նրանց երիվարները) երբեմն սայթաքում են, երբեմն ճանապարհից շեղվում և կառապանին ու իրենց տագնապի մեջ են գցում, երբեմն էլ հենց կառքն են խորտակում: Եվ երբ կառքը սարքին է լինում, կառապանը՝ առողջ, երիվարները՝ վարժ, ուղղություն վերցրած միայն երեսների կողմն են արշավում: Իսկ այս զարմանալի կառքը, հակառակ ու ոչ նույնատեսակ երիվարներով լծված և գաղտնի ձեռքով ուղղություն ստացած, ոչ թե միայն դեպի առաջ է արշավում, այլ բոլոր կողմերն է վազում, բոլոր ուղղություններով է ընթանում, ամեն տեղ է սլանում և այդ բոլորին ի վիճակի է: Երբ դեպի արևելք է ընթանում, որևէ արգելք չկա, որ դեպի արևմուտք արշավի, և երբ դեպի հյուսիս է սլանում, որևէ արգելք չկա, որ դեպի հարավ սուրա, որովհետև կառավարողի ձեռքը ունակ է դեպի ամեն կողմ ուղղելու և տիեզերքի չորս անկյուններն արշավել տալու:

### **Գրաբար**

Այլ որպես զԱղեքսանդրե խաբեին դեւք՝ թէ կենդանի կայցէ, որոց ըստ եգիպտական հնարողութեանն կապեալ արկեալ կախարդանօք գդեւ ի շիշ, կարծեցուցանէին թէ Աղեքսանդրոս կենդանի իցէ և մահ խնդրիցէ. և գալուստն Քրիստոսի խայտառակեաց զխաբեութիւնն, և եքարձ ի միջոյ զգայթակղութիւնն: Նոյնպէս և մոլորութիւնն դիւաց խաբեաց գդիւցապաշտս Հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանելոց է և ունելոց գաշխարհս, և ի սնոտի յոյս կապեալ կան անհաւատք. որպէս և Հրեայք՝ որ ի գուր ակնկալութիւն կապեալ կան, եթէ Դաւիթ գալոց է՝ շինել զԵրուսաղէմ և ժողովել զՀրեայս, և անդ թագաւորել նմա նոցա:

### **Աշխարհաբար**

Բայց ինչպէս որ դևերը Ալեքսանդրի վերաբերմամբ էին խաբեություն անում, թե կենդանի է, և իր մեջ, ըստ եգիպտական հնարիմացության՝ կախարդանքներով դևը կապելով ու գցելով շի մեջ, կարծել էին տալիս, թե Ալեքսանդրը կենդանի է ու մահ է ուզում, և Քրիստոսի գալուստը խայտառակեց այն խաբեությունն ու մեջտեղից վերացրեց չար օրինակը,- այնպէս էլ դևերի մոլորությունը խաբեց հայոց կռապաշտներին, թե Արտավազդ անունով մեկը քանտարկված է դևերի կողմից, որը մինչև այժմ կենդանի է, նա էլ ելնելու և տիրելու է աշխարհը: Եվ անհավատները դատարկ հույս են կապել, ինչպէս հրեաները, որ գուր ակնկալություն ունեն, թե Դավիթը գալու է, որ շինի Երուսաղէմը, այնտեղ հավաքի իրենց ու թագավորի իրենց վրա:

Գիտնականների համար շատ կարևոր է նաև Աշոտ Աբրահամյանի կազմած «Եզնիկի երկի ամբողջական բնագրի տպագրությունները» հատվածը, որը պարունակում

է 12 հրատարակությունների բոլոր տվյալները, որոնք իրականացվել են մինչև 1970 թվականը:

Գերմանացի հայագետ Պ.Ֆեթթերը խոր իմաստ է տեսել Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցի» քաղաքական ու ազգապահպանման դերում. „Это первый опыт идейного противоборства талантливейшего народа, пробудившегося от язычества и невежества к христианскому мышлению, поднявшегося против языческого мирозерцания, против его главных положений и основных идей”<sup>26</sup>.

Այս բնութագիրը հավաստում է, թե մեր օրերում որքան է կարևորվում «Եղծ աղանդոցի» արևելահայերենով կատարված դասական թարգմանությունը: Այսօր էլ մեր իրականության մեջ գործում են զանազան աղանդներ, որոնց նպատակն է հայ ժողովրդին շեղել ճշմարիտ քրիստոնեական հավատից, Գրիգոր Լուսավորչի հիմնածավանդներից: Բացի այդ, այսօր էլ Եզնիկի գիրքը հզոր զենք է սնահավատության դեմ, որն առկա է նաև մեր օրերում:

Գիտական թարգմանությունը պահանջում է թարգմանչի բազմագիտակությունը, գործի կարևորության գիտակցումը, բնագրի ճշգրտությունը և հմայքը պահպանելը:

Աշոտ Աբրահամյանի «Եղծ աղանդոցի» թարգմանության լեզուն և ոճը լիովին մեզ է փոխանցում Եզնիկի մատյանի ոսկեղենիկությունը:

---

<sup>26</sup> *С.С.Аревшатын, Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), Ереван, 1973, с. 80.*



**ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ**  
*բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ*

**ՄՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ  
ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Աշոտ Աբրահամյանի մասին առիթ եմ ունեցել լսել տակավին ուսանողական տարիներից՝ հայ հին և միջնադարյան գրականության և գրաբարի դասընթացների ժամանակ: Ավելի ուշ, երբ արդեն պարզ էր, որ միջնադարի հայ գրականությունը դառնալու է իմ հետաքրքրությունների առանցքը, այս լուսավոր մարդու մասին լսեցի այն ժամանակ իմ դիպլոմային աշխատանքի, իսկ հետագայում նաև թեկնածուական ատենախոսության ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիայի թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանից, որն ինձ ուղղակի հանձնարարեց սերտել Ա.Աբրահամյանի գրաբարի դասագիրքը: Հետագայում ևս պիտի առիթներ ունենայի Ա. Աբրահամյանի մասին Ա. Դոլուխանյանի շատ ջերմ գնահատականները լսելու: Ա.Աբրահամյանի հետ հաջորդ «հանդիպումը» կայացավ Մաշտոցի անվան Մատենադարանում, որտեղ ձեռագրագիտական նոր խումբ ձևավորելու ընթացքում Մատենադարանի գլխավոր ավանդապահ, Ձեռագրագիտության և «Մայր ցուցակ»-ի բաժնի վարիչ, ձեռագրական աշխարհի քաջ գիտակ Գեորգ Տեր-Վարդանյանը պարտադիր հանձնարարում էր սերտել նաև Աշոտ Աբրահամյանի դասագիրքը:

Օրերս Գեորգ Տեր-Վարդանյանը Ա. Աբրահամյանի մասին հիշեց հետևյալը. «Աշոտ Աբրահամյանին ճանաչել եմ դեռևս ուսանող տարիներից: Նրան առաջին անգամ տեսա Մաշտոցի անվան Մատենադարանում, որտեղ պրակտիկանտ էի. և այս հանդիպումը հետագայում պատճառ դարձավ, որ իմ գրաբարի դասընթացներին զուգահեռ, հաճախեի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտ՝ լսելու Աշոտ Աբրահամյանի գրաբարի դասախոսությունները, որոնցից բավականություն եմ ստացել: Այստեղ էլ իմացա նրա հողվածներից մեկի մասին, որն անմիջապես կարդացի և զրուցեցի իր հետ: Իսկ Սո. Օրբելյանի Պատմության Ա. Աբրահամյանի թարգմանությունը մերօրյա թարգմանությունների մեջ լավագույններից է, նկատի ունենալով հատկապես այն, որ քննական բնագիր չունենք: Նա գրաբարի մեր լավագույն մասնագետներից է»:



Միջնադարյան մատենագրական երկերի թարգմանչի համար լավագույն լուծումն է երբ նախքան թարգմանությունն առկա է երկի քննական բնագիր: Դա հնարավորություն է տալիս թարգմանչին աշխատել արդեն ծանոթագրված, որոշակի գիտական կյանք «ապրած», հեղինակային բնագրին հնարավորինս մոտ բնագրի հետ, աչքի առաջ ունենալ բնագրի զարգացման ընթացքը, խուսափել տարբերություններից բխող վրիպումներից, կատարել սուրբգրային տեղիների ճշգրիտ, բնագրին համապատասխան թարգմանություն: Սակայն Ա.Աբրահամյանը չի ունեցել այս հնարավորությունը, և Ստ. Օրբելյանի Պատմության աշխարհաբար թարգմանությունը, գիտական առաջաբանն ու ծանոթագրություններն արդեն պատկերացում են տալիս երջանկահիշատակ գիտնականի կատարած հսկայական աշխատանքի մասին. «Պետք է խոստովանենք, որ շատ վաղուց, դեռ մեր ուսումնասիրության տարիներից, զարմանքով ու ավստասանքով էինք զգում այս չափազանց արժեքավոր բնագրի թարգմանության բացը: Երջանիկ ենք, որ դրա վավերացումն ի վերջո բաժին ընկավ մեզ: Այն սիրով հանձն առանք և գլուխ բերեցինք ծանր աշխատանքով ու, մանավանդ, շատ կարևոր ժամանակի ծախսումով: Հատուցումը կլինի այն, որ մեր օրերի հետաքրքրասեր ընթերցողը նրանից կօգտվի հասկանալի լեզվով»<sup>1</sup>:

Խոսել Ստեփանոս Օրբելյանի Պատմության գեղարվեստական հատվածների աշխարհաբար թարգմանության մասին, նշանակում է անդրադառնալ մի քանի առանցքային հարցերի.

ա) Ա. Աբրահամյանի կատարած բնագրագիտական աշխատանքը:

բ) Ստ. Օրբելյանի աղբյուրների լեզվաոճական հատկանիշները և դրանց կապը թարգմանության հետ:

գ) Ստ. Օրբելյանի պատմությունը որպես գեղարվեստական երկ. պատմիչի ոճը և նրա վերաբերմունքը նկարագրվող դեպքերի և դեմքերի նկատմամբ:

Նախքան Աշոտ Աբրահամյանի թարգմանությունը, շոշափելի քայլեր արվել էին Ստ. Օրբելյանի երկի ուսումնասիրության և հրատարակության ուղղությամբ<sup>2</sup>: Այն ընդօրինակվել է ընդհուպ մինչև 19-րդ դ. վերջը<sup>3</sup>: Օրբելյանի Պատմությունը ամբողջական հրատարակվել է 1859թ. Փարիզում, Կ. Շահնազարյանի կողմից առաջաբանով և ծանոթագրություններով, այնուհետև՝ Մ. Էմինի կողմից 1861թ. Մոսկվայում: Վերջինս ի թիվս 2 անթվակիր ձեռագրերի, ձեռքի տակ ունեցել է նաև նախորդ հրատարակությունը, որոնցից էլ կատարել է համեմատություններ: Երկի

---

<sup>1</sup> Ստեփանոս Օրբելյան, Մյունխի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 61 (այսուհետև՝ բոլոր հղումներն այս գրքից՝ «Ստեփանոս Օրբելյան» ձևով):

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 58-60:

<sup>3</sup> Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. թիվ 7503, 1865թ., իսկ Օրբելյանի Պատմության հնագույնը մեր Մատենադարանի թիվ 6271, ՋԿԲ. (1513թ.) ընդօրինակված ձեռագիրն է:

ամբողջական ֆրանսերեն թարգմանությունն արել է հայտնի հայագետ Մ. Բրոսսեն: Նա նաև գրել է ուսումնասիրություն Ստ. Օրբելյանի գործի վերաբերյալ<sup>4</sup>: Ա.Աբրահամյանը բարձր է գնահատել Բրոսսեի ներդրումը օրբելյանագիտության մեջ, և նրա աշխատությունը թարգմանության առանձին հատվածների համար ուղենշային է եղել. «Մ. Բրոսսեի կատարածը նոր շրջան սկզբնավորեց մեր միջնադարյան խոշորագույն պատմագրի ժառանգության ուսումնասիրության մեջ: Պատմությունն ամբողջականությամբ դուրս եկավ համաշխարհային ասպարեզ»<sup>5</sup>:

1985թ. «Հանդէս ամսօրեայ»-ում Մարտիրոս Մինասյանը հրատարակեց Նորայր Բյուզանդացու անտիպ երեք տետր՝ «Ստեփանոս Ուռպելեան. Պատմութիւն տանն Միսական» խորագրով, առաջին ենթագլուխը՝ «Ա. Բառք կամ վկայութիւնք արտաքոյ Նոր հայկազեան բառարանին»<sup>6</sup> պարունակում է Ստ. Օրբելյանի պատմության մեջ առկա, սակայն Նոր Հայկազյան բառարան չմտած բառեր՝ այբբենական կարգով: Ա.Աբրահամյանն այս ցանկից չի օգտվել, սակայն այն ծանոթ էր Ստ. Մալխասյանցին, որի բառարանն էլ անմիջականորեն օգտագործել է Ա.Աբրահամյանը: Ա.Աբրահամյանի ձեռքի տակ եղել է նաև Նորայր Բյուզանդացու «Նախնիք» աշխատության մանրաժապավենը, որի միջոցով նա որոշ ուղղումներ է արել թարգմանության մեջ<sup>7</sup>: Նույնիսկ հարևանցի համեմատությունը թույլ է տալիս պնդել, որ Ա.Աբրահամյանի թարգմանությունը փոխադարձ լրացումների և ճշգրտումների հնարավորություն է տալիս, քանի որ Ն. Բյուզանդացու ցանկում կան բառեր, որոնք բացակայում են Մալխասյանցի բառարանում, սակայն Ա.Աբրահամյանի թարգմանության միջոցով հնարավոր է դառնում տալ այդ բառաշարքի գիտական բացատրությունը (անդաւի – առանց վեճի, անիրավաբարձ – անիրավաբար, անգրաւաւոր – անվախճան, բարձրակառայ – բարձրագոչ և այլն):

Ստ. Օրբելյանի պատմության ժամանակային մեծածավալ ընդգրկումն ու պատմիչի օգտագործած տարաբնույթ հայտնի և անհայտ աղբյուրները լուրջ բնագրագիտական և աղբյուրագիտական խնդիրների առաջ են կանգնեցնում թարգմանչին: Պատմությունը

---

<sup>4</sup> Այս մասին տե՛ս, Դոլուխանյան Ա., Մարի Ֆելիսիտե Բրոսսեն հայագետ, Առաջին՝ «Մարի Բրոսսեն հայ պատմիչների թարգմանիչ» գլխում, Երևան, 2002, էջ 23-34:

<sup>5</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 60:

<sup>6</sup> Ստեփանոս Ուռպելեան. Պատմութիւն տանն Միսական Ա. Բառք կամ վկայութիւնք արտաքոյ նոր հայկազեան բառարանին (Նորայր Բիւզանդացու անտիպներից), Առաջաբանը՝ Մարտիրոս Մինասեանի. – «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1985, էջ 9-26:

<sup>7</sup> «...նախրապան մանուկները արածեցնում էին եզների նախիրը և սկսեցին խաղալ. կտրելով մի կնյուն, խաչ պատրաստեցին ու սրեցին մի քարի վրա և սկսեցին երկրպագել»: Խաչ բառի փոխարեն տպագրում է եղել է «խաղ», և Ա.Աբրահամյանն ուղղումն արել է՝ նկատի ունենալով Նորայր Բյուզանդացու նկատումը (տե՛ս Ստեփանոս Օրբելյան, ծնթ. 998, էջ 490): Հմմտ. Նորայր Ն. Բիւզանդացի, Նախնիք, հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, Ժնն, 1996, էջ 95: Վիպական այս հատվածի մասին տե՛ս Դոլուխանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008, էջ 121:

լեզվական խայտաբղետ պատկեր է ներկայացնում. Օրբեյանը շրջանառության մեջ է դրել վիմական արձանագրություններ, ձեռագրերի հիշատակարաններ, դիվանական, կրոնական, իշխանական փաստաթղթեր, ժողովրդական բանահյուսության նմուշներ, դեպքերին քաջատեղյակ մարդկանց բանավոր հաղորդումներ և այլն: Պարզ է, որ անհրաժեշտ էր այս բոլորը ճշտել-համադրել-վերլուծել, մանավանդ որ բնագրի մեջ հանդիպում են փոխառյալ բառերով հարուստ այնպիսի հատվածներ, որոնք ժամանակակից ընթերցողի համար արդեն անհասկանալի են: Միայն թարգմանության ծանոթագրություններն արդեն հուշում են Աբրահամյանի կատարած աշխատանքի որակը և գիտական մոտեցումը: Թարգմանչի պատասխանատվության մասին են վկայում նաև ծանոթագրություններում Ա.Աբրահամյանի արած ակնարկներն այն մասին, որ ինքը պատմական Սյունիքի տարածքը շրջել և պահպանված արձանագրություններն իր աչքով տեսել ու կարդացել է<sup>8</sup>:

Ա.Աբրահամյանի, որպես գործի նվիրյալի և գիտակի, մտահոգությունը մեկն է եղել. բնագրագիտական-աղբյուրագիտական աշխատանքի արդյունքում ստանալ *հեղինակային շարադրանքին մոտ բնագիր*, առանց որի գիտական թարգմանությունը պարզապես անհնարին կլիներ. «Այս բոլորի հաշվառումով հավանաբար մոտենում ենք հեղինակային շարադրանքին»<sup>9</sup>:

Բնագրագիտական քննության նախնական արդյունքները հեղինակը ժամանակին ի մի էր բերել «Բնագրագիտական դիտարկումներ Ստեփանոս Օրբեյանի պատմական երկում» խորագիրը կրող հոդվածում, որի նպատակն էր «նպաստել այդ երկի բնագրի որոշ տեղերի ճշգրտմանը, լրացմանը... ճիշտ ճանաչմանն ու ընկալմանը»<sup>10</sup>: Այս հոդվածը բացառիկ կարևորություն ունի հետազայում Ստ. Օրբեյանի երկի քննական բնագրի աշխատանքների համար:

Աշոտ Աբրահամյանը թարգմանության համար հիմք է ընդունել փարիզյան, մոսկովյան հրատարակությունները և Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 6271 ձեռագիրը. «Դժվար էր դրանցից որևէ մեկին առաջնություն տալ, քանի որ մեկը մյուսի նկատմամբ ունի և՛ առավելություններ, և՛ թերություններ: Աշխատել ենք օգտագործել երկուսի առավելություններն ու թերություններն էլ՝ փոխադարձաբար թերությունները հարթելով: Իսկ երբ այդ դեպքերում չի հաջողվել դրական արդյունքի հասնել, հատկապես կասկածելի տեղերի համար դիմել ենք Մաշտոցյան Մատենադարանի հմր.

---

<sup>8</sup> Ա.Աբրահամյանը ծանոթագրությունների մեջ հաճախ այս կարգի հավելումներ է անում. «Մեր վերջին այցելությունը՝ 24 հունիսի, 1981թ.» (Ստեփանոս Օրբեյան, էջ 474):

<sup>9</sup> Աբրահամյան Ա., Բնագրագիտական դիտարկումներ Ստեփանոս Օրբեյանի պատմական երկում.- «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ Աբրահամյան Ա., «Բնագրագիտական դիտարկումներ» ձևով), 1985, № 3, էջ 59:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 55:

6271 ձեռագրին, որը ինստիտուտի տնօրինությունը սիրահոժարությամբ տրամադրել է մեզ»<sup>11</sup>:

Բնագրագիտական սրբագրումներ անելիս հեղինակը չի սահմանափակվել միայն վերը նշված հրատարակություններով և ձեռագիր աղբյուրով. երբ ձեռագրագիտական նյութի պակաս է զգացվել, թարգմանիչը դիմել է վիմական արձանագրությունները լուսաբանող գիտական ուսումնասիրությունների կամ Ստ. Օրբեյանի օգտագործած աղբյուրներին՝ հանդես գալով նաև որպես հրաշալի աղբյուրագետ: Գիտական բարեխղճությամբ են համեմատված Ստ. Օրբեյանի պատմության մեջ առկա արձանագրությունները, տարբեր գործիչների կենսագործունեության վերաբերյալ արված ծանոթագրությունները փաստահարույց են և մանրամասնորեն մեկնաբանված<sup>12</sup>: Ա.Աբրահամյանը ճշգրտում է մի շարք հատուկ անուններ, որոնք հրատարակված բնագրերում ներկայացված էին որպես հասարակ, անում է կարևոր սրբագրումներ, ճշտում գրչական սխալների հետևանքով առաջացած մտքի աղավաղումներ և այլն:

Ստ. Օրբեյանի երկի Թ. գլխում գործածված *Աթաշխոդա* հատուկ անունը, որը Մ. Բրոսսեն ստուգաբանորեն ընկալելով՝ թարգմանել է որպես հասարակ անուն *«կրակի պահապան»*, գրավել է Ա.Աբրահամյանի ուշադրությունը: Փարիզյան հրատարակության մեջ *Աթաշխոդա*-ն հատուկ անուն է՝ որպես պարսկական գնդի հրամանատար, սակայն ունի հոգնակի թվով ստորոգյալ. «Եւ *Աթաշխոդա ինքն* պարսկական գնդովն *խրեանց* ի փախուստ դառնային յահի ելանելով» (հ. 1, էջ 73)<sup>13</sup>: Ա. Աբրահամյանը նշում է, որ նման կառույցներում եզակի ենթակայի հետ հոգնակի ստորոգյալը «բացառված չէ, թեև սիրված և տարածված ոճ չէ»<sup>14</sup>: Ձեռագիրը, բնականաբար, այս դեպքում օգնել չէր կարող, քանի որ հատուկ անունները ձեռագրերում, որպես կանոն, ընդօրինակվում էին փոքրատառով: Ա. Աբրահամյանը դիմել է Ստ. Օրբեյանի պատմության այս հատվածի աղբյուր Մովսես Կադանկատվացու երկին, որտեղ *Աթաշխոդա*-ն ներկայացված է որպես պարսկական

<sup>11</sup> *Ստեփանոս Օրբեյան, էջ 62:*

<sup>12</sup> *Այնքան բազմակողմանի և գիտական բարեխղճությամբ են արված Ա.Աբրահամյանի ծանոթագրությունները, որ դրանք կարող են առանձին ուսումնասիրության նյութ դառնալ: Ա.Աբրահամյանի գիտական մոտեցման մասին են վկայում Ստ. Օրբեյանի Պատմության մեջ հիշատակված վիմական արձանագրությունների բնագրերի համեմատությունները. նա հաճախ նշում է, որ Օրբեյանը վիմական արձանագրության բնագիրը շարադրել է ազատ. «Պատմիչն ընդհանրապես հարազատ է մնացել այս վիմական արձանագրության ոգուն: Սակայն շարադրել է ազատ. զգալի չափով փոխել է, խմբագրել, որոշ հավելումներ ու կրճատումներ կատարել, բառեր ու բառաձևեր փոխել և այլն», Ստեփանոս Օրբեյան, ծնթ. 1152, էջ 501:*

<sup>13</sup> *Ի դեպ՝ մոսկովյան հրատարակության մեջ ենթական և ստորոգյալը համաձայնեցված են. «Եւ Աթաշխոդա ինքն պարսկական գնդին ի փախուստ դառնայր ի սաստիկ յահի եղանելոյն», տե՛ս Ստեփանոսի Միլենաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Միսական, ի լոյս ընծայեց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 23 (այսուհետև՝ գրաբարյան բոլոր քաղումներն այս հրատարակությունից՝ «Պատմութիւն տանն Միսական» խորագրով):*

<sup>14</sup> *Աբրահամյան Ա., Բնագրագիտական դիտարկումներ, էջ 57:*

գորավար. «Ահացեալք ի բաց գնացին գունդքն Պարսից հանդերձ Աթաշխոդայի *գորապետի* (ընդգծումը՝ Ա.Աբրահամյան) իւրեանց»<sup>15</sup>: Ա.Աբրահամյանի եզրակացությունը հետևյալն է. «Բոլոր դեպքերում Աթաշխոդա պետք է ընդունել որպես հատուկ անուն, որ կրում էր ժամանակի պարսկական մի գորապետ: Իսկ դրանից գատ ճիշտ է նրա ստուգաբանությունը. կրակապաշտ զինվորներն ընդհանրապես կարող էին կոչվել աթաշխոդա «կրակի պահապան»:

ԺԸ «Սյունյաց սուրբ և փառաբանված երանելի Հագո սեպուհի նահատակությունը, որը եղավ Միհրանի ձեռքով պարսիկների բազմության մեջ» գլխում «Յագո» հատուկ անունը փարիզյան հրատարակության մեջ «Ագո» ձևով է: Ա.Աբրահամյանը նախապատվությունը տալիս է սկզբնաղբյուրին՝ Ղազար Փարպեցու «Պատմութիւն հայոց» աշխատությանը և ընտրում «Յագո» ձևը. «Այսպես է նաև սկզբնաղբյուրում, մենք տալիս ենք այդ ձևով»<sup>16</sup>:

Թարգմանության ժամանակ աղավաղություն է նկատվել ԺԱ գլխում՝ Տիրոտ երեցի հրաշքների մասին պատմող հատվածում, «քաղեակ» բառի հետ կապված. «և արդ գաւազանն ո՞ր խնդիր առնես քաղեակ (կամ քաջեակ) տէր (այսպես է փարիզյան հրատարակության մեջ): Մոսկովյան հրատարակության մեջ՝ «... և արդ գաւազանին ո՞ր խնդիր առնէ նքողեալ տէր այն» (տպ., էջ 31): Այս երկու դեպքում էլ իմաստն աղավաղված է. պարզ նկատելի է, որ մոսկովյան հրատարակությունը սխալ ընթերցման արդյունք է: Ա.Աբրահամյանը դիմել է ձեռագրին, որտեղ ընթերցումն այսպես է. «և արդ գաւազանին ո՞ր խնդիր առնենք աղեակ տէր աստուծոյ» (էջ 34բ):

Հեղինակը ենթադրում է, որ ձեռագրի ընթերցումն ամենաստույգն է, որտեղ գործածված է «աղեակ» մեզ հայտնի «աղեկ» (լավ, բարի) բառը: Իսկ թարգմանությունը լինում է հետևյալ կերպ. «Եվ այժմ գավազանը որտե՞ղ փնտրենք, աստծու բարի տէր»<sup>17</sup>:

Երբ ո՛չ տպագիր, ո՛չ ձեռագիր և ոչ էլ սկզբնաղբյուրները չեն օգնել, Ա.Աբրահամյանը դիմել է Ստ. Օրբելյանի ոճի առանձնահատկություններին. այսպես՝ աղավաղություն ենք նկատում փարիզյան և մոսկովյան հրատարակությունների հետևյալ հատվածի մեջ. «Ոչ վայրապար ինչ վարկցիս գառաջի եղեալսն զի զՄիսական աշխարհիս սկսաք ճառել զվէպս»<sup>18</sup>: Ձեռագրի մեջ էական վրիպումներով հետևյալ կերպով է. «Ով դու, մի *վայրաբար* ինչ վարկցիս գառաջի եղեալս բան և *աւելախոյզ* զիս

<sup>15</sup> Ն.տ:

<sup>16</sup> *Ստեփանոս Օրբելյան, ծնթ. 178, էջ 429:*

<sup>17</sup> *Այս հատվածում Ստ. Օրբելյանը գավեշտով ներկայացնում է Տիրոց քահանայի արկածները, որը գավազանը գցել է խոտի դեզի մեջ, դեզն այրվել է, իսկ մարդիկ պետք է գտնեն այն, և այս հարցով դիմում են քահանային. տե՛ս Ստեփանոս Օրբելյան, էջ 91:*

<sup>18</sup> *Հատվածն առավել աղավաղված է փարիզյան հրատարակության մեջ. «Որպէս զիտոյ արար ինչ [մի] վարկցիս գառաջի եղեալս բան, եւ առաւելախոյզ զիս ծանիցես, այլ պատշաճ և ի դէպ մերումս ձեռնարկութեան, զի զՄիսական աշխարհի սկսաք ճառել զվէպս» (Ա.Աբրահամյան, Բնագրագիտական դիտողություններ, էջ 58):*

ծանիցես, այլ պատշաճ և ի դեպ մերում *ձեռնադրութեան*, զի զՄիսական աշխարհի սկսաք ճառել զվեպս, վասն որոյ հարկ է ամենայնի զեղեալսն ի սմագործս և հրաշս ցուցանել ձեզ...» (ընդգծումները մերն են՝ Լ.Ն.): Ձեռագրի համապատասխան հատվածի թարգմանությունն ու արված սրբագրումները վկայում են թարգմանչի պատասխանատու մոտեցումը. Ա.Աբրահամյանը սրբագրում է վայրապար (=վայրաբար), ձեռնադրութեան (=ձեռնարկութեան), աւելախոյս (=աւելախօս) բառերը և առաջարկում է հետևյալ՝ «հեղինակային շարադրանքին համեմատաբար մոտ» բնագիր. «Ով, դու [ընթերցող], առաջիկա խոսքս *անտեղի* չհամարես և ինձ էլ *շատախոս* չկարծես. ընդհակառակն, սա համապատասխան ու հարմար է մեր *ձեռնարկմանը*... քանի որ սկսեցինք շարադրել Միսական աշխարհի պատմությունը, ուստի անհարժեշտ է ցույց տալ այստեղ կատարված բոլոր գործերն ու հրաշքները»<sup>19</sup>: Ընթերցող բառն ավելացնելը Ա.Աբրահամյանը բացատրում է Ստ. Օրբելյանի ոճի առանձնահատկությամբ. «Բանն այն է, որ հեղինակը, իր սովորության համաձայն, երբեմն դիմում է նախորոշ ընթերցողին ու խորհրդածում իր անելիքների մասին: Այստեղ էլ վարվել է հենց այդ ձևով»<sup>20</sup>:

Թարգմանության ժամանակ հաճախ կարիք է զգացվել բնագրի մեջ միջամտություններ անելու կամ էլ թարգմանելու այնպիսի բառեր, որոնք բառարաններում արտահայտված չեն: Այս դեպքում նույնպես Ա.Աբրահամյանը խնամքով ծանոթագրել է արված փոփոխությունները: «Հրիտակ», «մատակ» և «կողբ» բառերի թարգմանությունների համար նշում է. «Այսպես ենք թարգմանել բնագրի *հրիտակ* բառը (իմա՝ կտակված ժառանգություն), որի ծագումն անհայտ է, բայց ձևը ենթադրում է իրանյան փոխառություն»<sup>21</sup>: Կամ՝ «Բնագրի համապատասխան տեղում գործածված է *մատակ* բառը, որը բնասերների կողմից բացատրվել է «ավազան կամ առու»... Հավանական համարեցինք «ջրավազան» իմաստը, որպես և թարգմանեցինք»<sup>22</sup>: *Կողորբ* բառի համար ծանոթագրում է. «Բնագրում՝ կողորբ: Այս բառը մեր մատենագրության մեջ գործածվել է «կարճ զգեստ, կրոնավորի կարճ ներքնագգեստ» իմաստով: Մ. Բրոսսեն թարգմանել է «զգրոց, տուփ՝ սուրբ մասունքներ պահելու համար»: Դա համընկնում է Ստ. Օրբելյանի գործածությանը: Բառիմաստը փոխված է, բայց բառարանները չեն արձանագրել: Թարգմանելիս նկատի ենք ունեցել այդ իմաստը»<sup>23</sup>:

Այնքան մանրագնին և բազմաբովանդակ է Ա.Աբրահամյանի բնագրագիտական աշխատանքը, որ, սխալված չենք լինի, եթե ասենք, որ թարգմանիչն արել է քննական բնագրին համարժեք աշխատանք:

<sup>19</sup> *Ստեփանոս Օրբելյան*, էջ 113, ծնթ., 212, էջ 432:

<sup>20</sup> *Աբրահամյան Ա., Բնագրագիտական դիտողություններ*, էջ 59:

<sup>21</sup> *Ստեփանոս Օրբելյան*, էջ 465:

<sup>22</sup> *Նույն տեղում*, էջ 476:

<sup>23</sup> *Նույն տեղում*, էջ 479:

Որպես պատմական իրողությունների ամբողջական ընթացքի մաս՝ Սյունյաց աշխարհի պատմություն, Օրբելյանի երկը կառուցվածքային և գեղագիտական որոշակի սկզբունքներով ձևավորված մի ամբողջություն է, որը լավագույնս շարունակում է Ե. դարի հայ պատմագրության դասական ավանդները, իսկ պատմականն ու գեղարվեստականը հանդես են գալիս յուրօրինակ դրսևորումներով<sup>24</sup>: Մա գիտականորեն շարադրված երկ է՝ հագեցած գեղարվեստական տարրերով<sup>25</sup>: Օրբելյանի պատմության գեղարվեստականությունը պայմանավորված է ժանրային մի շարք առանձնահատկություններով<sup>26</sup>, որոնք բխում են պատմագրության միահյուսվածությունից: Տարբեր ժանրերի մեկ երկում հանդես գալը որոշակիորեն փոխում է նաև տվյալ ստեղծագործության ոճական պատկերը:

Պատմագրական երկ լինելով՝ Ստ. Օրբելյանի պատմությունն ամփոփում է տարբեր ժամանակներում ստեղծված կամ հյուսված պատմություններ. «Մենք պրպտելով և ուսումնասիրելով իմացանք շատից քիչը գիտակ մարդկանցից, այլևայլ տեղերում մնացած հիշատակություններից, ինչպես նաև նախնիների ավանդություններից, որոնք հայրերը որդիներին էին հաղորդել մինչև մեզ»<sup>27</sup>, - գրում է պատմիչը:

Ստ. Օրբելյանի պատմության մեջ օգտագործված են լեզվաոճական խայտաբղետ նկարագիր ունեցող աղբյուրներ՝ Աստվածաշունչ, վիմական արձանագրություններ, հիշատակարաններ, բանավոր գրույցներ, վարքեր և վկայաբանություններ, շինարարական աշխատանքների նկարագրություններ, պաշտոնական գրություններ և այլն, որոնք Պատմության լեզվին և ոճին յուրօրինակություն են հաղորդում և դնում խնդիրներ թարգմանչի առաջ: Այդ մասին Ա.Աբրահամյանը գրում է. «Պարզորոշ երևում է, որ լեզվական տեսակետից վերջիններս (իմա՝ կավվածագրերը) տարբերություններ ունեն պատմության հեղինակային շարադրանքի համեմատությամբ: Դրանց մեջ կան այնպիսիները, որոնք ժամանակային առումով նույնիսկ մի քանի հարյուրամյակով նախորդում են այս երկի շարադրանքին, սակայն ավելի շատ բարբառային-աշխարհաբարյան տարրեր են պարունակում»<sup>28</sup> : Այս առանձնահատկությանն ավելանում է նաև Ստ. Օրբելյանի հարուստ բառապաշարը. «Հեղինակը, օգտագործելով մեր լեզվի մատենագրությամբ ավանդված ճոխ բառազանձից՝ միաժամանակ բառագործածությամբ առաջ է անցել, կատարել է նորակերտումներ. փոխառությունների, վերաիմաստավորումների և նման այլ միջոցներով գործածության մեջ է դրել այնպիսի

<sup>24</sup> Տե՛ս Հայ միջնադարյան գրական ժանրեր, Երևան, 1984, էջ 11:

<sup>25</sup> Այս թեմայով տե՛ս Ն. Թամամյանի «Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Միսական» երկը որպէս գրական ստեղծագործություն» ատենախոսությունը (Մեղմագիր բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան հայցելու համար, Երևան, 2010):

<sup>26</sup> Դոլուխանյան Ա., Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը, Երևան, 2012, էջ 12-18:

<sup>27</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 303:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 49:

բառեր, որոնք կոչված էին արտահայտելու համապատասխան ժամանակի յուրահատուկ հասկացություններ կամ ընդհանրապես իմաստային նրբություններ»<sup>29</sup>:

Պատմությունը վկայում է, որ Ստ. Օրբելյանն իր նյութին մոտեցել է պատասխանատվությամբ: Հենց սա է թելադրում Պատմության կառուցվածքային-ռճական աչքի ընկնող մի առանձնահատկություն. ամեն առանձին հատվածի մուտքի և ավարտի մասերում արտահայտվում է պատմիչի վերաբերմունքը թե՛ օգտագործած աղբյուրների և թե՛ շարադրելիք նյութի նկատմամբ. նա նախ համառոտ ներկայացնում է ասելիքը, ապա եզրափակում:

«Միտքս, լցված անդիմանալի խնդությամբ, սքանչանում է առաջադիր այս սխրալի պատմության վրա. քանի որ մինչև այստեղ խոսեցինք կարծես թե մեկի գարշահոտ դիակի մասին, [այսինքն նրանց մասին], որոնք, հեթանոսական մոլորություններով հրապուրված, հաղորդակից էին միայն մարմնականին և անցողիկ փառքին, զուրկ ու թափուր ճշմարիտ գեղեցկություններից և անկապտելի փառքից, իսկ այժմ փառաբանություն պիտի գրենք երկու բանի մասին՝ հոգևորի և մարմնավորի, մնայունի և մշտնջենականի՝ որպես գեղեցիկ ու անուշահոտ կենդանի մարդու մասին...»<sup>30</sup>:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ստ. Օրբելյանը սուրբգրային քաղվածքներով չի ծանրաբեռնել պատմությունը. այդ քաղվածքներն առկա են հիմնականում դավանաբանական հատվածներում՝ թղթերում կամ ավելի սակավ՝ արձանագրություններում: Ա.Աբրահամյանը սուրբգրային տեղիները նույնպես թարգմանել է բնագրին հարազատ, սակայն չի բավարարվել դրանով, տողատակերում խնամքով արտահայտված են Աստվածաշունչ մատյանի համեմատ բնագրային տարբերությունները՝ համապատասխան նշումներով: ԼԲ «Սուրբ Մեթոդիոս պատրի եպիսկոպոսի և նահատակի երազը՝ անցյալի, ներկայի և գալիքի մասին՝ Աստվածաշնչի քաղվածքներով հանդերձ, որ թարգմանել է Սյունյաց եպիսկոպոս Տեր-Ստեփանոսը» գլխում, ինչպես երևում է խորագրից, առատորեն օգտագործված են սուրբգրային քաղվածքներ: Տողատակերում տեսնում ենք թարգմանչի ցուցումներն ըստ համեմատյալ բնագրի. «Կա հատվածների տեղափոխություն, ինչպես և բնագրային որոշ տարբերություններ»<sup>31</sup> կամ «Լրիվ չի համընկնում հիշյալ շարադրանքին»<sup>32</sup> կամ «Ուղղել

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>30</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 73-74: «Անտանելի լցեալ խնդութեամբ հրաշանան միտք իմ ի վերայ սխրալի պատմութեանս որ առաջի կայ. զի ցայս վայր իբր զժահահոտ մեռելոյ ուրուք ճառեցաք զբանս, որք ի հեթանոսական մոլորութեանց էին յափշտակեալք, միայն մարմնոյ և եղծական փառաց հաղորդեալք, զուրկք և ունայն ի ճշմարիտ գեղեցկութեանցն և յանկողոպտելի փառաց: Իսկ այժմ գերկուց իրաց ունիմ գրել փառաւորութիւնս՝ զհոգևոր և զմարմնաւոր, զմնացականն և զմշտնջենաւորն, իբր գեղեցիկ և զանուշահոտ կենդանեաց» (Պատմութիւն տանն Միսական, էջ 10):

<sup>31</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 157:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 160:



ենք ըստ Աստվածաշնչի»<sup>33</sup> և այլն: Սրանք նույնպես բնագրագիտական արժեք ներկայացնող ցուցումներ են, որոնք հետագայում կարող են որպես հիմք ընդունվել քննական բնագրի սուրբգրային հատվածների համար:

Ստ. Օրբելյանի պատմությունը հետաքրքիր է լեզվական ատաղձի առումով. այն հարուստ է հունարեն, արաբերեն, պարսկերեն, վրացերեն փոխառություններով, որոնք որոշակի ոճական նկարագիր են հաղորդում Պատմությանը: Նկատելի է, որ եթե այդ փոխառությունները մեջբերվող աղբյուրի բնագրի մեջ չեն, այլ Ստ. Օրբելյանի շարադրանքն են, Ա.Աբրահամյանը թարգմանել է, իսկ եթե դրանք անմիջականորեն հեղինակի գործածած աղբյուրից են բխում, թարգմանիչն աշխատել է հարազատ մնալ Ստ. Օրբելյանի մեջբերած հատվածների լեզվական հատկանիշներին: Ա.Աբրահամյանը լեզվական այդ գունագեղությունը պահպանել է՝ օտար բառը չթարգմանելով, այլ ծանոթագրելով: Այդ փոխառությունները հիմնականում պատմական եզրույթի արժեք ստացած անվանումներ են:

«Եվ արդ՝ ո՛չ մերոնք, ո՛չ էլ ուրիշ մեկը այս գյուղերի հետ չունեն որևէ հաշիվ՝ ոչ չարի, ոչ մահմեդականների հարկի, ոչ բերդաչարի, ոչ գունդգահի և ոչ էլ ուրիշ բաների, այլ իրավունքը պատկանում է նույն սուրբ խաչին ու հոգևոր առաջնորդին»<sup>34</sup>:

Լիպարիտ Օրբելյանի հետ կապված նշվում է սուրբ խաչի առիթով առաջացած մի վեճի մասին, որը լուծելու համար հրավիրվում են բարձրատոհմիկ մարդիկ. «Իվանեն էլ, նստեցնելով իր մեծամեծներին՝ Բուպաքին ու *գավառապետին*, Իվան *դպեղին*, Մեմնա *Ջաղեղիին*, մեծ *նախարարապետին*, որ եկել էր [Վրաստանի թագավորությունից], Վարձեի *վանահորը*, Գարշտեուքի մեծ *հայրապետին*... և ուրիշ բազմաթիվ *մեծամեծ մարդկանց*, ինչպես նաև Տփղիսի, Անիի, Դվինի *դատավորներին*, Սուրմարիի անվանի *շեյխին*...»<sup>35</sup>: Ընդգծված բառերը փոխառյալ են հիմնականում վրացերենից, որոնք բոլորն էլ ծանոթագրված են, մանրամասն բացատրված և բնագրում՝ թարգմանված<sup>36</sup>:

Ստ. Օրբելյանի պատմությանը յուրահատուկ գեղարվեստական գունավորում են հաղորդում անեծքները<sup>37</sup>, ասույթները, որոնք հիմնականում գործածված են արձանագրություններում, հիշատակագրություններում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ

---

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 163:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 276: «Եւ արդ ոչ մերոց և ոչ ումեք չկայ իշխանութիւն և հաշիւ հետ այս շինորէիցս՝ ոչ չարի, ոչ Տաճկաց հարկի, ոչ բերդաչարի, ոչ գունդգահի և ոչ այլ իրաց, այլ միայն սուրբ խաչիս և հոգևոր տեսանս է իշխանութիւն» (Պատմութիւն տանն Միսական, էջ 242):

<sup>35</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 293: «Եւ նորա նստուցեալ զմեծամեծս իւր՝ հրամայէր քննել զԲուպայն և զմարծուան, զԻւան դպեղն և զմեմնաշաղեղն. զմեծ ճղանդիտելն՝ որ եկել էր ի թագաւորութենէն, զծիրամ ձորն Վարձեոյ և զծիրամ ձորն Պղնձահանիցն և զմեծ մամթավարն Գարշտեուցն... և այլ բազում ղէղէպուլք ևս և զղատին Տփղեա և զղատին Անոյ և զանուանի շեյխն» (Պատմութիւն տանն Միսական, էջ 260):

<sup>36</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 293, ծնթ. 1126-1138, էջ 499-500:

<sup>37</sup> Հարությունյան Ս., Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975:

երբ անեծքն ուղղվում է այլադավաններին, փոխվում է նաև բառային ատաղձը. Ստ. Օրբեյանն օգտագործում է պարսկերեն, թուրքերեն կամ այլալեզու բառեր:

Օրինակ՝ «Իսկ եթե... մեկը ցանկանա խախտել իմ այս նվիրատվությունը, աստծուց և այդ սուրբ խաչից դատապարտվի, հոգևոր տերերից նզովվի և իմ, ծնողներիս կյանքիս ընկեր իշխան Հրահատի բոլոր մեղքերի ու հանցանքների համար աստված նրան տուժեցնի. նա սատանայի ու իր կամակատարների հետ անշեջ կրակի մեջ տանջվի»:

Շարունակության մեջ մահմեդականներին ուղղված անեծքում թարգմանությունը հետևյալ կերպ է. «Եվ եթե մահմեդական պաշտոնություն փոխարինի և հափշտակել ջանա, հազարից հազար *նալլաթ* ստանա ու իր *փեղամբարի* կողմից մերժված լինի»<sup>38</sup>: Ընդգծված բառերը Ա.Աբրահամյանը չի թարգմանել, սակայն ծանոթագրության մեջ բացատրում է դրանց իմաստը<sup>39</sup>:

Մեկ այլ անեծքի մեջ, որտեղ, ըստ թարգմանչի, բառերն ընկալելի չեն, ներկայացրել է թարգմանաբար. «Իսկ եթե *մահմեդական* մեծավոր լինի և հափշտակել ջանա, իր Մահմեդից *մերժված լինի* օրենքով հազար-հազար *նալլաթ* ստանա և *հավատուրաց* և սևերես լինի աստծու առաջ»<sup>40</sup>: Անեծքների նշված հատվածների թարգմանությունը ցույց է տալիս, որ Ա.Աբրահամյանը փորձել է հարազատ մնալ բնագրին՝ չխաթարելով նրա ոճական նկարագիրը:

Թարգմանության առումով առավել բարդ խնդիր է գրողի ոճին հարազատ թարգմանություն ներկայացնելը. դա զգալի է հատկապես Ստ. Օրբեյանի դեպքում, քանի որ հեղինակի ոճը փոփոխական է՝ կապված նկարագրվող նյութի հետ: Վիպական հատվածներն ու գրույցները<sup>41</sup> շարադրված են աշխույժ ու թեթև ոճով, հագեցած են կարճ ու բովանդակալից երկխոսություններով: Երկխոսությունների դինամիզմը նույնպես փոխանցվում է թարգմանության միջոցով: Այդպիսի մի գեղեցիկ պատմություն կապվում է Գյուտ կրոնավորի հրաշքի հետ. «Այնուհետև վերև նայելով տեսան մի արջ՝ ահավոր կերպարանքով նստած, մի թաթը սրբի ձեռքում, որի վերքը բուժում էր [սուրբը]: Այն ժամանակ երիտասարդը խիստ վախեցավ: Եվ քանի որ սուրբ հայրը երագում իմացել էր նրա գալը, ձայնեց. «Մի՛ վախենա, եկ ինձ մոտ»: Իսկ նա ասաց. «Դու ի՞նչ ես»: Պատասխանեց. «Քեզ նման մարդ եմ»: Երիտասարդն ասաց. «Այդ ի՞նչ են քեզ հետ»:

---

<sup>38</sup> Ստեփանոս Օրբեյան, էջ 204-205:

<sup>39</sup> «Փեղամբար»՝ «պատգամաբեր մարգարե, հատկապես Մուհամմեդ», որպես պարսկերեն փոխառություն: Տե՛ս Ստեփանոս Օրբեյան, ծնթ. 648, էջ 468:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 203, ծնթ. 639-641, էջ 468: «Իսկ թե տաճիկ աւագ լինի և յափշտակել ջանայ՝ յիւր Մահմետէն ապիզար և յիւր օրինացն հազար հազար նալաթ նորա վերայ եղիցի, և ինքն դէնակորոյս և սևերես լիցի յիւր Աստուծոյն» (Պատմութիւն տանն Միսական, էջ 159):

<sup>41</sup> Տիրոտի արկածները (գլ. ԺԱ), Գյուտ կրոնավորի մասին պատմող պատմությունները (գլ. ԻԱ), Շահանդուխտ կույսի մասին պատմող գրույցը (գլ. ԼԶ) և այլն:

Գյուտն ասաց. «Իմ շներն են»: Իսկ նա ասաց. «Դրանց հրամայիր հեռանալ»: Եվ հրամայեց»<sup>42</sup>:

Դժվար չէ նկատել, որ Ա.Աբրահամյանն աշխատել է անգամ շարադասությունը պահել այնպես, որ թարգմանությունը բնագրին հարազատ լինի: Դավանաբանական հատվածներին բնորոշ են ոճի մոնումենտալությունը, նախադասությունները երկարաշունչ են, մակդիրների շարքը՝ ծավալուն: Հերոսների արտաքին նկարագրությունների մեջ Ստ. Օրբելյանը հարազատ է մնացել հայ դասական մատենագրության ավանդներին, արտաքին նկարագրությունները քիչ են, դրանց փոխարինում են հեղինակի վերաբերմունքն արտահայտող մակդրային բնորոշումները. «Տարսայիճը, որը գորեղ ու մարտնչող մարդ էր, բոլոր գործերում հաջողակ, նաև բարեպաշտ ու խիստ աստվածասեր»<sup>43</sup>: Պատմության ԼԶ գլուխը նվիրված է Շահանդուխտ օրիորդի հետ կատարված հրաշքին, որտեղ Ստ. Օրբելյանը Շահանդուխտին նկարագրում է հետևյալ կերպ. «Նրա կերպարանքն արտասովոր էր և հաճելի, չքնաղ գեղեցկությունը զարմանք էր պատճառում տեսնողներին: Ոչ ոքի չէր թվում, թե նա նյութեղեն է, այլ կարծես կերպարանավորված էր լուսատարր օդից ու նրբանուրբ շողերից»<sup>44</sup>:

Պատմության ամենաջերմ և անկեղծ հատվածներից է Ստ. Օրբելյանի վաղամեռիկ եղբոր մասին հատվածը, որն իսկապես քնարական շնչով է հյուսված. այդ քնարականությունը փոխանցում է նաև թարգմանությունը. «...Իմ սիրելի կրտսեր եղբայր Փախրադուլան երիտասարդական զարդարուն և գեղեցիկ հասակում, երբ նորաբույս մորուքը թխությամբ սկսել էր փայլփլել՝ բոլորելով վայելչագեղ ծնոտները, սիրտը զվարճությամբ ու խնդությամբ նախապատրաստվում էր քաղցր ու զվարթ կյանքի վայելման, կամքը՝ իշխանական փառքի, թափ ու թռիչքի ձգտման, հանկարծ ենթարկվեց օրհասին: Մահը կոտրեց սլացիկ բույսը, արմատախիլ արեց ծաղկափթիթ տունկը, անժամանակ տարավ իմ բաղձալիին, որը և զատվելով մեզանից, այս աշխարհից գնաց առանց որևէ հիշատակ թողնելու»<sup>45</sup>:

---

<sup>42</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 115: «Ապա ի վեր նայեցեալ՝ տեսին արջ մի ահագին կերպարանօք նստեալ, և միոյն թաթն ի ձեռն սրբոյն, զի բժշկէր ի վիրաց: Անդէն զարհուրեալ մանկանն երկեաւ. և զի ի տեալեան իմացեալ էր սուրբ հայրն զգալն նորայ՝ ձայնեաց. «մի՛ երկնչիր, եկ առ իս». և նա ասէ. «զի՞նչ էս դու». և ասէ «մարդ իբրև գրեզ». ասէ. «և զի՞նչ են դոքա որ ընդ քեզ». ասէ Գիւտ. «շունք իմ են». ասէ. «հրամայեա դոցա ի բաց գնալ». և հրամայեաց» (Պատմութիւն տանն Միսական, էջ 59):

<sup>43</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 332: «Տարսայիճն, որ էր այր գորեղ և պատերազմող և յաջողակ յամենայն գործս, նաև բարեպաշտ և աստուածասեր յոյժ», Պատմութիւն տանն Միսական, էջ 305:

<sup>44</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 169: «Եւ ունէր պատկեր նոր և օտար, և գեղ նորա յոյժ չքնաղ զարմացուցիչ տեսողաց, որ ոչ ումէք նիւթեղէն կարծիւր, այլ իբր ի լուսատարր օդոյ և յանօսր շողից կերպացեալ» (Պատմութիւն տանն Միսական, էջ 119):

<sup>45</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 385: «Կրտսեր և սիրելի եղբայրն իմ՝ Փախրադուլայն, ի գարդ և ի գեղ մանկական հասակի՝ մինչ տէգ մորուսացն փաղփաջեալ լինէր թխատիպ տեսակաւ շուրջ բոլորեալ

Գրական արժեք ունեն ռազմական տեսարանները. «Ահեղ աղաղակ բարձրացնելով՝ [կողմերը] խառնվեցին միմյանց. ճակատամարտ տեղի ունեցավ այնպիսի դրոշմունով, որ թվում էր, թե ամպերի որոտում է, կայծակների ճայթյուններ են: Ինքը՝ Լիպարիտն էլ որպես հրախառն ամպ մտնում ու ելնում էր՝ շատերին կայծակնահար անելով, ինչպես որ հրդեհն է եղեգնուտով փոթորկալից անցնում, ճեղքում էր հակառակորդի գորքը... արյան գետեր էր հոսեցնում, դիակների կույտեր էր առաջացնում, այդ այլազգիներին ջոկատ առ ջոկատ մասնատում էր և ինչպես նապաստակների խմբեր դիվաթավալ անում դաշտի մեջ»<sup>46</sup>: Ակնհայտ է՝ չնայած պատմիչն օգտագործել է այլ աղբյուրներ, սակայն նյութը վերարտադրված է գեղագիտական ճաշակով և գրավչությամբ. «ձգտել է առարկայական, գունագեղ, պատկերավոր ու հեշտ ընկալելի դարձնել նկարագրությունը, և դա նրան, անշուշտ, հաջողվել է»<sup>47</sup>: Այդ գունագեղությունն անկասկած հաղորդում է նաև թարգմանությունը Պատմության բնագրին հարազատ ոճով:

Ստ. Օրբելյանի Պատմության մեջ առկա են չափածո հատվածներ: Աշխարհաբար թարգմանության հետ համեմատությունը ցույց է տալիս, որ Ա.Աբրահամյանը պահպանել է ոչ միայն չափածո հատվածի հանգավորումը, այլ նաև տողաչափը.

<p>Ի մեծ Իւանէ Օրբէլեցի՝ Քաջ և հզօր անպարտելի, Որ աշխարհաւ ես ճենացի՝ Տոհմ ինքնակալ թագաւորի. Եկեալ յաշխարհս յայս Վրացի Գտեալ պատիւ անկշռելի, Պետ և գլուխ տանս արքունի Եւ սպասալար Գեորգի. Թէ քո հարկիքդ քեզ պիտի՝ Կեանքդ և պատիւդ ցանկալի,</p>	<p>Մեծ Իվանէ Օրբեթեցի, Քաջ և հզոր, անպարտելի, Որ աշխարհով ես ճենացի, Տոհմից տիրող թագավորի, Եկած երկիրն այս գեղանի, Գտած պատիվ անկշռելի. Դու պետ, գլուխ արքունիքի՝ Սպասալարը Գեորգի: Թե պետք է խոսք արժանիքիդ՝ Կյանքդ ու պատիվդ են ցանկալի,</p>
---	---

*զպատշաճագեղ ծնօտիւքն՝ և սիրտ նորա զարճ խնդամտական խորհրդօք ի վայելս քաղցրաբօս կենցաղոյս և կամք նորա ի վագս և ի թիոս իշխանաշուք փառաց՝ յանկարծակի հասեալ օրհասն կենաց՝ խզեաց զբոյսն քաջուղէշ և իլեաց գտունկն ծաղկափթիթ, երարձ տարածամ զբաղձալին ինձ, որ և հրածարեալ ի մէջ գնաց յաստեացս առանց իրիք յիշատակի» (Պատմութիւն տանն Միսական, էջ 362):*

<sup>46</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 306: «Եւ գոչեցին ահեղ աղաղակաւ և խառնեցան ընդ միմեանս. և խմբեցաւ պատերազմն ահագին իմն դրոշմամբ, որ թուէր իբր որոտումն ամպոց և ճայթմունք փայլատականաց: Եւ ինքն Լիպարիտ իբր զամպ հրախառն մտանէր և ելանէր և կայծակնահար առնէր զբազումս, և զօրէն հրոյ ընդ եղեգն փոթորկեալ՝ ճեղքէր զոգով նոցա և անցանէր յայն կողմն և յաջ և յահեակ հոսէր գետս արեանց. և դնէր կոյտս դիականց և հատանէր յայլազգեցան գունդս գունդս և զայն իբրև գերամս նապաստակաց տապաստ արկանէր ի դաշտին» (Պատմութիւն տանն Միսական, էջ 275):

<sup>47</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 57:

Եւ հայրենիքդ անչափելի՝ Որ կէս Վրաց տանս է աւելի <sup>48</sup>	Տիրույթներդ են անչափելի Վիրքի կեսից էլ ավելի <sup>49</sup> :
--	---

Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ վերը նշված հատվածի աշխարհաբար թարգմանությունն արված է այնպես, որ թարգմանության զգացողություն պարզապես չի թողնում:

Ստ. Օրբելյանի Պատմության թարգմանության քննությունը թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

Ստ. Օրբելյանի Պատմության աշխարհաբար թարգմանությանը նախորդած աշխատանքը Ա.Աբրահամյան բնասեր, պատմաբան, բնագրագետ, աղբյուրագետ գիտնականի գիտականորեն հազեցած և բարեխիղճ վերաբերմունքի արդյունքն է:

Գիտնականի դիտողություններն ու նկատումները, սրբագրումներն ու ծանոթագրությունները ելակետ կարող են լինել Ստ. Օրբելյանի Պատմության քննական բնագիրը կազմելիս:

Թարգմանիչը թե՛ գրական և թե՛ այլ հատվածների թարգմանության ժամանակ ելակետ ունեցել է հետևյալը՝ ստանալ հեղինակային բնագրին մոտ թարգմանություն: Այդ նպատակով շարահյուսական կառույցներն ու կապակցությունները, պատկերավորման միջոցների թարգմանություններն արված են այնպես, որ դրանք արտահայտում են Ստ. Օրբելյանի Պատմության ոճական պատկերը հարազատորեն:

Ա.Աբրահամյանի այս մեծածավալ և շնորհակալության արժանի աշխատանքը միջնադարյան մատենագրական երկերի աշխարհաբար թարգմանությունների մեջ ունի և կունենա իր բացառիկ կարևոր տեղը:

<sup>48</sup> Պատմութիւն տանն Միսական, էջ 283:

<sup>49</sup> Ստեփանոս Օրբելյան, էջ 313:



**ՊԱՐՈՒՅՐ ՄԱՀԱԿՅԱՆ**  
*բանասիրական գիտությունների  
 թեկնածու, դոցենտ*

**ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ  
 ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ**

Ստեփանոս Օրբելյանը (ծննդ. թիվը անհայտ – վախճ. 1305) հայ պատմագրության նշանավոր դեմքերից է: Նրա գլուխգործոցը՝ «Պատմութիւն նահանգին Սիսական», շատ վաղ է արժանացել միջազգային հայագիտության հատուկ ուշադրությանը: Դեռևս 18-րդ դարում ֆրանսիացի հայագետ Լակրոզը որոշ հատվածներ թարգմանել է լատիներեն՝ կարևորելով պատմության գիտական բնույթը: Ստեփանոս Օրբելյանն ունի հարուստ կենսագրություն, որի հիմնական աղբյուրն իր գրվածքներն են՝ հատկապես պատմությունը: Նրա հայրը՝ Տարասայիճ Օրբելյանը, 1285թ-ին դարձել է Սյունիքի իշխան և իր որդուն, որին նախապես պատրաստել է հոգևոր կոչման, ուղարկում է Կիլիկիա՝ Լևոն Երրորդ թագավորի մոտ, որպեսզի այնտեղ վերջինս օծվի Սյունիքի մետրոպոլիտ: Այդ օրերին (1286) վախճանվել էր Հայոց կաթողիկոս Հակոբ Ա Կլայեցին, և Լևոն Երրորդը, որը մի առանձնահատուկ սեր ուներ կրթված ու լուսավորյալ մարդկանց նկատմամբ, առաջարկում է Ստ. Օրբելյանին դառնալ Հայաստանի կաթողիկոս, սակայն վերջինս մերժում է թագավորին:

Երբ նորընտիր Հայոց կաթողիկոս Կոստանդին Բ Կատոկեցին ընտրվում է վեհափառ, Ստեփանոս Օրբելյանը նրա կողմից ձեռնադրվում է Սյունիքի մետրոպոլիտ և 1287 թվականին վերադառնում Սյունիք:

Կիլիկիայում Ստ. Օրբելյանը հյուրընկալվում է Լևոն Երրորդի արքունիքում և թագավորի հետ ունեցած շփումների ժամանակ համոզվում, թե որքան մեծ տեղ է տալիս վերջինս երկրի մշակութային կյանքին. «Ուշադրության արժանի է, որ Լևոն Գ օրինակել տվեց հայկական գրականության նշանավոր արդյունքները և զանազան տեղեր ցրեց՝ ուսումնականների գործածության համար. նորան ենք պարտական, որ շատ հայ ձեռագրեր անկորուստ հասել են մինչև մեր օրերը»:<sup>1</sup> Ստեփանոս Օրբելյանն իր հոգևոր պաշտոնավարության շրջանում, որը տևել է մինչև 1305 թվականը, կատարել է շինարարական երևելի աշխատանքներ՝ հաճախ դրանք իրականացնելու համար տրամադրել սեփական նյութական միջոցները, մեծ աջակցություն է ցուցաբերել Գլաձորի համալսա-

<sup>1</sup> Ստ. Պալասանյան, Պատմութիւն Հայոց, սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1895, էջ 509:

բանին, բազմացնել է տվել մի շարք արժեքավոր ձեռագրեր: Կապեր է պաշտպանել Հայաստանի նշանավոր հոգևորականների հետ: Դրա առհավատչյան նույն ժամանակահատվածի նշանավոր բանաստեղծ Խաչատուր Կեչառեցու պատվերով գրված ողբն է, որում Օրբելյանը չափածո խոսքով անմահացրել է Սյունիքի Բաղանց թագավորությունը.

Բայց միւս ևս այլ մէկ ջահ լուցին  
Ի տան Բաղաց Միսականին,  
Մմբատ սեպուհ քաջագարմին  
Ի հայկազանցն այն առաջին՝  
Աջոյ բազուկք Հայոց ազգին,  
Բարձր և հզօր անպարտելին,  
Չաչուերս ածեմ կողկողագին,  
Չայն արձակեմ ողորմագին:<sup>2</sup>

Գրական այս ուշագրավ հուշարձանի խորագիրն է. «Ողբ ի դիմաց Ս. Կաթողիկէին»: Ըստ էության այս Ողբը դարձել է համառոտված Հայոց պատմություն՝ ի հայտ բերելով այն իրողությունը, որ նրա հեղինակը քաջ տիրապետում է իր ազգի անցյալի հերոսական դրվագներին ու ցավալի կորուստներին: Կարծես դարերի համար գրված լինի այս Ողբը, որում աշխարհին ներկայացվում է, թե որքան հսկայածավալ ու փառահեղ երկիր է եղել Մեծ Հայքը՝ Ասքանազի աշխարհը, որի սահմանները հասնում էին Հոնաց սահմաններին ու Կովկասին, ձգվում մինչև խազարների երկիրը, հասնում հյուսիսային Պոնտոսին և տարածվում մինչև պարսկական Կասպից ծովը.

Ես թագաւոր էի նախկին,  
Բարձր և հզօր անպարտելին,  
Կանգնեալ յաշխարհս Ասքանազին,  
Տիրեալ ազգաց ու ազանց սորին,  
Ի դրանց Հոնաց և Կովկասին,  
Ուր ծով Կասպիցն է և Խազրին,  
Մինչ ի ստորին կողմն Գամրին  
Եւ Կոկիսոն հատ սահմանին,  
Ի Պոնտոսէ հիւսիսային  
Մինչ ի Վրկանն պարսկային:<sup>3</sup>

Այս հատվածները վկայում են, թե ինչ նվիրվածություն ուներ «Սյունիքի պատմության» հեղինակը սեփական ժողովրդի անցյալի ու իր ժամանակների ներկայի նկատմամբ:

Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմությունը» 1819-ին ֆրանսերենով հրատարակել է նշանավոր հայագետ Անտուան Ժան Սեն-Մարտենը «Mémoires

<sup>2</sup> Խաչատուր Կեչառեցի, *Տաղեր, Աշխատասիրությամբ Ա. Դոլուխանյանի, Երևան, 1988, էջ 94:*

<sup>3</sup> *Նույն տեղում, էջ 87:*

historique et géographique sur l'Arménie» հետազոտության երկրորդ հատորում: Բացի ընդարձակ առաջաբանից<sup>4</sup>, որում ներկայացվում է Ստեփանոս Օրբելյանի մանրամասն կենսագրությունը, խոսվում է նրա գլխավոր երկի պատմական բարձր արժեքի մասին. հայագետը կցել է նաև հանգամանալի ծանոթագրություններ:<sup>5</sup>

Իհարկե Մեն-Մարտենի թարգմանած պատմությունը խիստ թերի է. Բավական է այն համեմատել աշխարհաբար թարգմանության բնագրի հետ դրանում համոզվելու համար: Այն սկսվում է Ա. Աբրահամյանի թարգմանության ԿԶ գլխից, որն ունի հետևյալ խորագիրը. **«Օրբելյանների մեծ նախարարության ծագման, որպիսության և այս կողմերը գալու մասին, այլև բազմաթիվ զրույցներ զանազան դեպքերի ու գործերի վերաբերյալ»:**<sup>6</sup> Մեն-Մարտենի թարգմանությունը խիստ պակասավոր է. Օրբելյանի երկի բնագիրը շատ ավելի ծավալուն է Աշոտ Աբրահամյանի թարգմանության մեջ: Այդ իսկ պատճառով նշանավոր հայագետի կատարածը շարունակեց նրա երախտագետ աշակերտը՝ Մարի Ֆելիսիտե Բրոսսեն, հրատարակելով պատմության առավել ծավալուն բնագիր՝ լույս ընծայելով այն առանձին ծավալուն հատորով, այնուհետև՝ երկու տարի անց, հրապարակ հանելով հատուկ հետազոտություն՝ նվիրված Ստեփանոս Օրբելյանի պատմությանն ու գործունեությանը:<sup>7</sup>

Այս բոլոր ծանոթագրությունները ծանոթ են եղել երկի աշխարհաբար թարգմանության հեղինակին, որը տեղյակ է նաև ռուսերեն հատվածաբար թարգմանողներ Քերովբե Պատկանյանի, Քուչակ Հովհաննիսյանի, Մկրտիչ Էմինի ծանոթագրություններին: Ա. Աբրահամյանի առաջաբանից իմանում ենք, որ «Սյունիքի պատմությունը» երկու ձեռագիր մատյանների հիման վրա հրատարակել է Լ. Մելիքսեթ – Բեգր: Ահա թե ինչ է խոստովանում աշխարհաբար թարգմանության հեղինակ Աշոտ Աբրահամյանը. «Գալով ներկա աշխարհաբար թարգմանության հանգամանքներին՝ պետք է խոստովանենք, որ շատ վաղուց, դեռ մեր ուսումնառության տարիներից, զարմանքով ու աստուսանքով էինք զգում այս չափազանց արժեքավոր բնագրի թարգմանության բացը: Երջանիկ ենք, որ դրա վավերացումն ի վերջո բաժին ընկավ մեզ: Այն սիրով հանձն առանք և գլուխ բերեցինք ծանր աշխատանքով ու, մանավանդ, շատ կարևոր ժամանակի ծախսումով: Հատուցումը կլինի այն, որ մեր օրերի հետաքրքրասեր ընթերցողը նրանից կօգտվի իրեն հասկանալի լեզվով»:<sup>8</sup>

---

<sup>4</sup> A. J. Saint – Martin, *Mémoires historique et géographique sur l'Arménie, t. II, Paris, 1819, p. 1-57.*

<sup>5</sup> *Նույն տեղում, p. 176 – 300.*

<sup>6</sup> Մտ. Օրբելյան, *Սյունիքի պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները* Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 301:

<sup>7</sup> *St' u M. Brosset, Histoire de la Siounie, premier livraison, SPb, 1864, second livraison, SPb, 1866. St' u նաև Ա. Դոլուխանյան, Մարի Ֆելիսիտե Բրոսսեն հայագետ, Երևան, 2002, էջ 23-34:*

<sup>8</sup> Մտ. Օրբելյան, *Սյունիքի պատմություն, էջ 61:*



Ի տարբերություն Ստեփանոս Օրբելյանի երկի հայագգի և օտարագգի հրատարակիչների՝ Աշոտ Աբրահամյանը շրջել է ներկա Հայաստանի և Արցախի այն վայրերում, որոնք հիշատակված են «Մյունիքի պատմության» մեջ: Այս հանգամանքը առավել մեծ արժեք է հաղորդում նրա կոթողային թարգմանությանը:

Ա. Աբրահամյանը կատարել է գիտական թարգմանություն. նա քննել է իր ձեռքի տակ եղած բոլոր ծանոթագրությունները և նրանց մեջ առանձնացրել ճշգրիտը, իսկ հաճախ էլ չի ընդունել նրանցից ոչ մեկը և գիտական հիմնավորմամբ առաջադրել իրենը՝ նորը, ճշմարիտը:

Հայ ժողովրդի պատմությանը ծանոթ ցանկացած անձ կարող է հաճույքով արձանագրել, որ աշխարհաբար թարգմանության ծանոթագրությունները որքան հարստացնում են իր գիտելիքները և որքան առավել հեշտացնում են բնագրի գիտական յուրացումը: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, թե այդ ծանոթագրությունները ընդհանուր գծերով տեսանելի են դարձնում հայ ժողովրդի պատմության հիմնական իրադարձություններն ու կարևոր դեմքերին՝ սկսած IV դարից մինչև XIII դարի ավարտը:

Ա. Աբրահամյանն օգտագործել է 121 միավոր տպագիր աղբյուրներ՝ հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն: Դրանց շարքում լայնորեն օգտագործել է 1884-ին Կոստանդնուպոլսում լույս տեսած Նորայր Բյուզանդացու «Բառագիրք ի գաղիերեն լեզուէ ի հայերեն» արժեքավոր բառարանը: Թարգմանությանը կցված ծանոթագրությունները թվով 1778-ն են: Ծանոթագրությունների այսպիսի առատությունն էլ ամրապնդել է դրանց գիտականությունը:

Ծանոթագրված են պատմության մեջ եղած տեղանունները, պատմական դեմքերը, հիշատակված պատմական իրադարձությունները, աստվածաշնչային դրվագները, նախորդ շրջանից եկող հայ, վրացի, եկեղեցական պատմիչների գործերը, հոգևոր ծեսերը, պաշտոնները, հայ կաթողիկոսները, հույն և պարսիկ, ինչպես նաև հայ թագավորները, լեռները, գետերը, գրեթե բոլոր վանքերը, որոնք հիշատակված են պատմության մեջ, բերդերը, հայ մատենագիրները, հայ նշանավոր իշխանները, վրաց թագավորներն ու թագուհիները, հայ նշանավոր իշխանուհիները և այլն, և այլն:

Բերենք մի շարք բառերի բացատրություններ, որոնք առաջնահերթ անհրաժեշտ են հայ միջնադարի գրականության բնագրերը ճիշտ հասկանալու համար.<sup>9</sup>

**Հերձվածող** – Հերձվածող էին համարվում եկեղեցու միաբանությունից շեղվողները, գանազան աղանդների հետևողները (249, 435):

**Եմփորոն** – Եմփորոնը երկար և լայն ժապավենաձև կտոր է՝ խաչերով ասեղնագործ զարդարված, որ բարձրաստիճան կրոնականները զցում են շուրջառի կամ փիլոնի վրայից՝ պատելով ուսերն ու կուրծքը (314, 441):

---

<sup>9</sup> Ծանոթագրության թիվը և էջը կնշենք վերևում - Պ.Ս. :

**Ուրար** - Ուրարը երկար ժապավենաձև կտոր է՝ զարդերով: Կրում են կրոնավորները (319, 442):

**Փակեղ** – Փակեղն այստեղ նույնացված է ուրարի հետ: Մեր մատենագրության մեջ փակեղ բառը գործածված է տարբեր իմաստներով՝ «ծածկոց», «գլխանոց», «ուսանոց», «գոտի», «վակաս», «վեղար», «բաճկոն» և այլն (320, 442):

**Սկիհ** – Սկիհը արծաթե անոթ է՝ պատվանդանով, թաս, որի մեջ եկեղեցում լցնում են հաղորդության գինին: (323, 442)

**Անագանոս** – Անագանոսը հունարեն բառ է՝ «ընթեր-ցող»: Ծագում է «կարդում եմ», «վերձանում եմ» բառից (325, 442):

**Աղաբողոն** – Աղաբողոնը կրոնավորի վերարկու է, կարճ փիլոն: Մեր մատենագրության մեջ բառը հանդես է բերվել զանազան տարբերակներով՝ աղաբողոն, աղբողովն, աղաբղոն և այլն (326, 442):

Բացատրություններ են տրվում հոգևոր և աշխարհիկ պաշտոնյաների աստիճանական նշանակություններին.

**Դիակոն** – Դիակոնը հունարեն բառ է, որ նշանակում է ծառա, սպասավոր, սարկավազ (321, 442):

**Արքեպիսկոպոս** – Արքեպիսկոպոսը եպիսկոպոսների ավագն է, գլխավոր եպիսկոպոսը: Ավելի ուշ ժամանակներում՝ հոգևորական աստիճան, որ շնորհում է կաթողիկոսը գլխավորապես թեմերի եպիսկոպոսներին (315, 441):

**Կաթողիկոս** – Կաթողիկոսը հայոց եկեղեցու ընդհանուր պետն է (316, 441):

**Եպիսկոպոս** – Եպիսկոպոսը հոգևոր բարձր աստիճանավոր է, եկեղեցական մեկ թեմի կամ վիճակի հոգևոր գործերի կառավարիչ, ղեկավար. իրավունք ունի քահանա ձեռնադրելու (318, 441):

**Քորեպիսկոպոս** – Քորեպիսկոպոսը գավառական եպիսկոպոսն էր, որ ենթարկվում էր թեմական եպիսկոպոսին կամ թեմական եպիսկոպոսի փոխանորդը, գործավարն էր (613, 465-466):

**Ասպետ** – Ասպետ բառը իրանյան ծագում ունի և սկզբնապես նշանակել է «ձիապետ»: Չնափոխվելով ու անցնելով հայերենին՝ գործածություն է ստացել «ձիավոր ազնվական», «հեծյալ իշխանավոր» նշանակությամբ: Հին Հայաստանում դա բարձր պաշտոնի անուն է եղել: Իսկ ի՞նչ էր այդ պաշտոնը՝ որոշակի հայտնի չէ: Դրա բացատրությունը ձգտել են տալ Մ.Էմինը, Ն.Բյուզանդացին, Ս.Մալխասյանցը և ուրիշներ: Թերևս հավանական է Ս.Մալխասյանցի ենթադրությունը, ըստ որի ասպետը թագավորի մերձավոր խորհրդականն ու երկրի ընդհանուր կառավարիչը պիտի լիներ<sup>10</sup> (70, 419):

---

<sup>10</sup> Ասպետի՝ արքունիքում կատարած պաշտոններից մեկն էլ Հայոց թագավորի թագադրումն էր: Ահա թե ինչ է ասում ասպետ Սմբատ Բագրատունին դավաճան Մերուժան Արծրունուն . «Պսակեմ գրեզ, Մերուժան, քանզի ի ինդիր էիր թագաւորել Հայոց, և ինձ ասպետիս պարտ է գրեզ պսակել ըստ

**Բարձ** – Բարձ բառը հնում ունեցել է նաև «նստելու հարմարանք, նստարան, գահ» նշանակությունը: Այս դեպքում գործածված է պատվավոր տեղի, ըստ աստիճանի հատկացվող գահի իմաստով: Հին Հայաստանում թագավորները ազնվականներին, նախարարներին արքունիքում իրենց սեղանի շուրջ տեղեր էին հատկացնում նրանց աստիճանի ու պատվի համաձայն (72, 419):

**Ազատ** – Ազատ բառը մեր լեզվում պահլավական փոխառություն է: Հնում այսպես էին կոչվում ֆեոդալական դասակարգի մարդիկ՝ նախարարները, սեպուհները և այլք, որոնք ազատ էին հարկից: Ս. Օրբելյանը դա հաճախ է գործածում՝ նշելով տերերին (=իշխաններին) ստորադասվող ազնվական մարդկանց, ինչպես այստեղ՝ «տերանցն և... ազատաց նոցա» (652, 469):

**Մովպետան մովպետ** - Մովպետան մովպետը գրադաշտական կրոնի քրմապետների գլխավորն էր Պարսկաստանում: Բառի ծագումը պահլավական է, գալիս է մոզպետ-ից (122, 424):

**Վարազագիր մատանի** - Վարազագիր մատանի՝ իր վրա վարագի պատկեր կրող մատանի: Վարագի պատկերը պարսից Մասանյան թագավորների կնիքի նշանն էր: Այդպիսի պատկերով մատանին նաև կնիքի դեր էր կատարում: Ըստ երևույթին այդպիսի մատանի կարող էին դնել հատուկ արտոնություն ունեցող մեծամեծներ (68, 419): Ա. Աբրահամյանը իր ծանոթագրություններից մեկում (67, 418) ճշտում է, թե Միսական տոհմին վարազագիր մատանի կրելու իրավունքը սվել է ոչ թե Վաղարշակ Առաջինը, այլ Տրդատ Առաջինը: Ի դեպ, Միսական տոհմի ներկայացուցիչներին շքեղ զարդեր կրելու իրավունքը հավանաբար շարունակվել է նաև հետագայում: Դա երևում է Եղիշեի՝ Վասակ Սյունեցու հագուստի ու զարդերի նկարագրից:<sup>11</sup>

Հայ միջնադարյան գրականության գաղափարական ուղղվածությունն անհնար է ճշգրիտ պատկերացնել առանց մի շարք տիեզերական ժողովների մասին ստույգ տեղեկություններ ունենալու, որովհետև այդ հոգևոր հավաքներն իրենց որոշակի ներգործությունն են ունեցել հայոց եկեղեցու վրա: Այդպիսի ժողովներից են հատկապես Եփեսոսինը և Քաղկեդոնինը:

Աբրահամ Զամինյանը «Հայոց եկեղեցու պատմության» մեջ ներկայացրել է առաջին, երկրորդ, երրորդ տիեզերական ժողովները, որոնց հավելել է Քաղկեդոնի ժողովը, որն ըստ նրա փոխանակ խաղաղություն և համերաշխություն մտցնելու՝ «սաստիկ մեծ

---

*սովորական Իշխանութեան իմոյ հայրենեաց»:* (Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Արեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, էջ 305):

<sup>11</sup> «Կոչեցին և գուրացեալն, և նա ըստ առաջին կարգի օրինացն արքունի արկաներ գպատուական հանդերձն զոր ունէր ի թագաւորէն. կապէր և գպատուավորսն և զխորն ոսկեղէն դներ ի վերայ և զկրանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդէլուզեալ մարգարտով, և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զգինդսն յականջսն, և գումարտակն ի պարանոցին, զսամոյրսն զթիկամբքն, և զամենայն օրէնս պատուոյն զանձամբ արկեալ՝ երթայր յարքունիս » (Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 274):

խոովությունն առաջ բերեց, որ երկար տարիներ շարունակվեցավ և քրիստոնեական եկեղեցու բաժան-բաժան լինելուն պատճառ դարձավ»:<sup>12</sup>

Հայտնի է, որ երրորդ տիեզերական ժողովը գումարվել է 431 թվին Եփեսոս քաղաքում. նպատակն էր մերժել նեստորականությունը: Նեստորը հույների պատրիարքն էր, որը քարոզում էր, թե Հիսուս Քրիստոսը ծնվեց Մարիամից որպես հասարակ մարդ: Բերենք Քաղկեդոնի ժողովի և նեստորականության ծանոթագրությունները.

«**Քաղկեդոնի ժողովը** տեղի է ունեցել 451 թվականին: Այդպես է կոչվում տեղի անունով: Ժողովը բյուզանդական արքունիքի և եկեղեցու ճնշման տակ մեծամասնությամբ որոշեց ընդունել Քրիստոսի երկու բնություն (մարդկային և աստվածային) ունենալը: Այդ դավանանքը կոչվում է քաղկեդոնականություն: Այդ ժողովին Հայաստանը մասնակցություն չունեցավ: Իսկ երբ քաղկեդոնականությունը սուր բնույթ ընդունեց և սպառնալիք դարձավ հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային շահերի համար, Դվինի երկու ժողովներով պաշտոնապես մերժվեց: Հայ եկեղեցին ընդունում էր Քրիստոսի միակ՝ աստվածային բնությունը (233, 433):

**Նեստորականության**<sup>13</sup> էությունն այն էր, որ քարոզվում էր, թե Քրիստոսը ծնվել է իբրև սոսկ մարդ, նրան հետո է միացել աստվածային փառքը: Հետևաբար Քրիստոսը ոչ թե աստվածածին էր, այլ՝ մարդածին: Այս ուսմունքը դատապարտվեց 431 թվականին, Եփեսոսի ժողովում, բայց հետագայում էլ դեռ ունենում էր իր դրսևորումները: Պատմական տվյալներից երևում է, որ հետագայում Հայաստանում էլ է նա արտահայտություն գտել: Դրա բնորոշ ապացույցներից է Դվինի հայտնի ժողովը (554թ.), որն ուղղված է քաղկեդոնականության և հատկապես նեստորական աղանդի դեմ (237, 434).

Օրբեյանի պատմության ծանոթագրություններից մեկը բացատրում է միջնադարի համընդհանուր իրականությունը հասկանալու նաև մեկ այլ կարևոր հասկացություն՝ չորս ավետարանիչների աթոռները.

«Այդ չորս աթոռներն ու պատրիարքություններն էին Ալեքսանդրիայինը (Մարկոս ավետարանիչի աթոռը), Անտիոքինը (Մատթեոսի աթոռը), Հռոմինը (Ղուկասի աթոռը), Եփեսոսինը (Հովհաննեսի աթոռը)»: Սրանք լրիվ նշված են Ս. Օրբեյանի օգտագործած սկզբնաղբյուրում (292, 440): Թարգմանիչը մատնացույց է անում այն երկու աղբյուրները,

---

<sup>12</sup> Հայոց եկեղեցու պատմություն, կազմեց Արրահամ Չամիսյան, Երևան, 1992, էջ 81:

<sup>13</sup> *Несториане – христианская секта, последователи Нестория; после его смерти вследствие гонений в Сирии, выселились в Персию, откуда распространились в Аравию, Индию и Китай. В Месопотамии часть их приняла в XVI в. унию с Римом и образует особый восточнокатолический патриархат халдейского обряда. Большинство же не принявших унию другого патриарха в Курдистане и признает только три таинства: крещение, евхаристию и священство (Ф.А.Брокгауз, И.А.Ефрон, Иллюстрированный энциклопедический словарь, Москва, 2012, с. 424).*

որոնցից ինքը քաղել է ծանոթագրության նյութը՝ առանց բերելու վերջիններիս բնագրերը, նշելով միայն էջերը:

Մովսես Կաղանկատվացի

«Արդ՝ եթե ողջամտութեան հաւատոյ էք, խոստովան լերուք, եթե ո՛վ է պատրիարքն ձեր, զի չորք միայն կացին ի վերայ երկրի. Աղեքսանդրին՝ Մարկոսի աթոռն, Անտիոքայն՝ Մատթէոսին, Հռոմայն՝ Ղուկասուն, Եփեսոսին յԱսիա՝ Յովհաննու. ըստ չորեքկերպեան տիեզերաց, ըստ քառավտակ գետոցն աղենականի, ըստ չորեքկերպեան կենդանեացն, ըստ չորից աւետարանչացն, ըստ չորից մովսիսական օրինացն, զի երկրորդումն օրինացն ուրիշ համարի»:<sup>14</sup>

Մխիթար Գոշ

«Արդ, ահա ցուցաք փոխանակ երկնից՝ զեկեղեցի, փոխանակ չորեքկերպեան կենդանեացն՝ զաւետարանիչսն, եւ նոցա փոխանակ՝ զհայրապետացն դասսն եւ զնոցին աթոռսն: Աւագ եւ մեծ աթոռ Անտիոքայն՝ զՄատթէոսին, Աղեկսանդրուն՝ զՄարկոսին, Հռոմայն՝ զՂուկասու, Եփեսոսին՝ զՅովհաննուն»:<sup>15</sup>

Աշոտ Աբրահամյանը ծանոթագրություններում կարևոր և լրացուցիչ փաստեր է հաղորդում այն գահակալների ու նշանավոր պետական պաշտոնյաների մասին, որոնք թագավորել են Հայաստանում, Վրաստանում, Հունաստանում, Պարսկաստանում և աշխարհի այն երկրներում, որոնց մասին խոսք կա «Սյունիքի պատմության» մեջ: Նկատենք, որ թագավորներին վերաբերող ծանոթագրությունները սկսվում են Աստվածաշնչի Հին կտակարանից և հասնում են մինչև մեր թվարկության XIII դարի վերջը:

Հայտնի է, որ Տիգրան Մեծի նման Տրդատ Մեծն էլ մտել է աշխարհի հանրագիտարանների մեջ: Եթե առաջինը ներկայացված է որպես աշխարհակալ Հռոմին հաղթող և արքայից արքա տիտղոսով, ապա Տրդատ Երրորդը հայտնի է որպես քրիստոնեությունը պետական կրոն դարձրած առաջին թագավոր: Ա. Աբրահամյանի ծանոթագրություններում Տրդատ Մեծի մասին կարդում ենք. «Խոսքը Հայաստանի Տրդատ Երրորդ թագավորի մասին է, որն իշխել է 298-330 թվականներին: Սրա օրոք 301 թվականից քրիստոնեությունը Հայաստանում հռչակվեց պետական, պաշտոնական կրոն (81, 420):

Բրոկհաուզ – Էֆրոնի բառարան

«Тиридат III Великий, армянский царь парфианского происхождения, сын Хозроя I, царствовал в 286-342, счастливо сродился с Сасанидами (новоперсидскими царями). В 302

<sup>14</sup> Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղուանից աշխարհի, Երևան, 1988, էջ 272:

<sup>15</sup> Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Երևան, 1975, էջ 135:

г. Тиридат принял христианство, заменил языческие храмы церквями и монастырями, призвал много священников из Сирии и Малой Азии и сделал христианство государственной религией. **Время его царствования – самый блестящий период армянской истории»:**<sup>16</sup>

Ինչպես ասեցինք, թարգմանիչը ծանոթագրել է բոլոր տեղանունները, որոնց թվում են Հայաստանի և այլ երկրների նշանավոր աշխարհագրական վայրերը, ամրոցները, բերդերը, մայրաքաղաքները և հատկապես վանքերն ու եկեղեցիները, որոնց մի մասը անձամբ տեսել է, ճշգրտել վիմագիր արձանագրությունները:

Ահա թե ինչ է ասում նա Արցախի Ամարաս վանքի մասին. «Ամարասը գյուղաքաղաք էր. գտնվում էր այժմյան Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Մարտունու շրջկենտրոնից 10կմ դեպի հյուսիս-արևելք: Այստեղ Գրիգոր Լուսավորիչը 4-րդ դարի սկզբին հիմնադրել է վանք, որի կառուցումը շարունակել և ավարտել է նրա թոռը: Այս վանքը երկար ժամանակ ոչ միայն կրոնական, այլև մշակութային նշանավոր կենտրոն է եղել: Դարերի ընթացքում բազմիցս վերանորոգվել է և այժմ էլ կանգուն է (96, 421):

Ստ. Օրբելյանի ծանոթագրությունները շատ կարևոր են հայ պատմավիպասանների վեպերը առավել կատարյալ հասկանալու համար: Հատկապես Րաֆֆու «Դավիթ Բեկ» վեպում պատկերված բազմաթիվ բերդեր, գյուղեր կարելի է ճանաչել ըստ վերոհիշյալ ծանոթագրությունների:

Ստ. Օրբելյանի պատմության Գ գլուխը ունի հետևյալ վերնագիրը. «Սյունյաց աշխարհի սահմանների ցուցադրումը, նաև՝ թե մարդկանց պետքերի համար ի՛նչ հարստություն ունի, որքան են գավառներն ու անառիկ բերդերը»: Թվարկելով Սյունյաց աշխարհի բոլոր գավառներն ու անառիկ բերդերը՝ պատմիչը գլխի վերջում դնում է հետևյալ եզրահանգումը. «Եվ ահա այսքանը որպես տեղեկություն քեզ համար մեր Սիսական աշխարհի բնական հարստությունների, սահմանների, բերդերի և գավառների մասին» (էջ 71):

Այս եզրահանգումը կարող է ոչ մասնագետ ընթերցողի մոտ այն տպավորությունն առաջացնել, թե Ստեփանոս Օրբելյանը իր պատմությունը գրելիս ունեցել է մեկենաս, ինչպես Մովսես Խորենացին, Եղիշեն, Ղազար Փարպեցին, և պատմիչը դիմում է նրան: Մովսես Խորենացին իր պատմության մեջ մի քանի անգամ դիմում է մեկենասին: Առաջին գրքի վերջին գլխում պատմահայրը բողոքում է մեկենասին՝ Սահակ Բագրատունուն, որ վերջինս շարունակ շտապեցնում է իրեն, և ինքն այդ պատճառով չի կարողացել գրել ոչ Ալեքսանդր Մակեդոնացու և ոչ էլ Իլիական պատերազմի մասին. «Այլ առ ի մենջ այսոքիկ կամ յերկար, և քեզ ըստ կամաց, կամ փոյթ, և քեզ ոչ հաճելիք: Զի

<sup>16</sup> Փ. А. Брокгауз, И. А. Ефрон, *Иллюстрированный энциклопедический словарь*, ст. 691.

այսպես ի քո հապճեպելոյ ահա ոչ ինչ յաղագս Մակեդոնացոյն, և ոչ վասն Եղիականին ի կարգին նշանակեցաք, այլ զօղեմք աւասիկ»:<sup>17</sup>

Ա. Աբրահամյանը խոսել է նաև վրաց և հայոց եկեղեցիների բաժանման մասին (278, 438): VII դարասկզբին խիստ սրվում է հայոց ու վրաց եկեղեցիների հակամարտությունը:<sup>18</sup> Վրաց Կյուրիոն կաթողիկոսը (599-616) երկու տարի (606-608) պայքար է սկսում հայոց եկեղեցու գաղափարախոսության դեմ, որը 608 թվականին հանգեցնում է այդ երկու եկեղեցիների բաժանմանը: Սմբատ Բագրատունին և հայոց հոգևորականության վերնախավը շատ ջանքեր է գործադրում Կյուրիոնին հետ պահելու քաղկեդոնականությունից, սակայն բյուզանդական արքունիքը ամեն ինչ անում է, որ իրենց քաղաքական շահերի համար վրաց եկեղեցին հեռանար հայկականից: Ահա թե ինչ են գրում այդ մասին Մովսես Կաղանկատվացին և Ստեփանոս Օրբելյանը:

#### Մովսես Կաղանկատվացի

«Եւ սակս ինն դասակարգութեան գլխատրք եկեղեցական անձնահաճ կամօք ըստ նպերտ բարուց՝ Հայաստանեայցն կարգեն զԱբրահամ պատրիարք և զԱղուանիցն՝ արքեպիսկոպոս, և զՎրացն մետրոպոլիտ: Խեռեցաւ Վրացն, որում Կիւրոն կոչէին, և զհակառակութեան բերէր վճիռ»:<sup>19</sup>

#### Ստեփանոս Օրբելյան

«Եվ երբ աղմուկ տեղի ունեցավ մեր աշխարհում, Հայաստանի հունական մասում ոմն Հովհան հակաթոռ կաթողիկոս էր նստած ու եկեղեցու ինը դասերի կարգի համաձայն հույների կողմից էր հետամուտ Հայաստանին: Վրաց կաթողիկոս Կյուրիոնն էլ իր փառամուլական ախտի պատճառով հեռացավ հայոց եկեղեցու դավանակցությունից ու քաղկեդոնիկ դարձավ, ապա և Աղվանքի կաթողիկոսը բաժանվելով հեռացավ՝ ինչ-որ պատրվակներ մեջտեղ բերելով» (էջ 243):

Ծանոթագրություններում մանրամասներ կան Նվարսակի պայմանագրի վերաբերյալ.<sup>20</sup> «Բանակցությունները վարվեցին Հեր գավառի Նվարսակ գյուղում, 484

<sup>17</sup> Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, էջ 88:

<sup>18</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, II, Երևան, 1984, էջ 289:

<sup>19</sup> Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղուանից աշխարհի, էջ 284:

<sup>20</sup> Նվարսակի պայմանագիրն ուներ երկու կարևոր պահանջներ՝ առաջինը՝ հայերի համար պահանջում էր խղճի ազատությունը, իսկ երկրորդը՝ Հայաստանի ներքին խնդիրներում ազգային ինքնավարություն. «Եւ է մին յերիցն՝ նախ և առաջին խնդիրս այս կարևոր և պիտանի. եթէ զհայրենի և զբնիկ օրէնս մեր ի մեզ թողուք, և Հայ այր զոք մի՝ մոզ ոչ առնէք, և ումեք յաղագս մոզութեան զահ և պատիւ չտայք, և զկրակարանն յաշխարհէս Հայոց ի բաց տանիք, և զեկեղեցոյ թշնամանս յաղտեղի և յանպիտան մարդկանէ ... և քրիստոնէայ մարդկան և քահանայից զկարգ և զպաշտօնն քրիստոնէայ մարդկան և քահանայից զկարգ և զպաշտօնն քրիստոնէութեան համարձակութեամբ և աներկիւղ տայք պաշտել՝ ուր և կամին. ապա բարի է, և առաջին խնդիրն մեր այդ է »:

թվականին, կնքվեց հաշտության պայմանագիր, որը և հաստատվեց պարսից արքունիքի կողմից: Վահան Մամիկոնյանը պաշտոնապես նշանակվեց Հայաստանի սպարապետ: Կարճ ժամանակով մարզպան դարձավ Անդեկանը, որը շուտով հեռացվեց, և մարզպանությունը ևս հանձնարարվեց Վահան Մամիկոնյանին: Իսկ այնուհետև այս քաջ հայրենասերը որքան է իշխել՝ ստույգ հայտնի չէ: Միայն գիտենք, որ 506 թվականի մի ցուցակում նախարարների մեջ նրա անունն այլևս չի հիշատակվում: Հիշյալ բանակցությունները վարել են պարսկական կողմից Նիխոր Վշնասպդատի ղեկավարած պատվիրակությունը: Հայաստանի կողմից՝ Վահան Մամիկոնյանի ղեկավարած խումբը: Սրա սկզբնաղբյուրը նույնպես Ղ. Փարպեցու պատմությունն է (189, 429):

Ծանոթագրություններում կարդում ենք արժեքավոր տեղեկություններ պատմության ասպարեզից վերացած ազգերի մասին: Այդպիսիք են՝ հեփթաղները, հոները, սկյութները.

**Հեփթաղները** նույն քուշաններն են (հունական ցեղեր), որոնք կոչվում են նաև սպիտակ հոներ (187, 429):

**Հոները** վաչկատուն ցեղեր էին: Իբրև ժողովուրդ կազմավորվել են 2-4րդ դարերում: Եկել են Ուրալից: Մի ժամանակ բնակվել են Վոլգայի, Կասպից ծովի ափերին, Հյուսիսային Կովկասում, Սև ծովի հյուսիսային ափին: Ավերիչ արշավանքներ են կատարել Եվրոպայի և Ասիայի տարբեր ժողովուրդների վրա:<sup>21</sup> Իրենց առաջնորդ Աթթիլայի մահից հետո (453թ.) բաժան-բաժան եղան և աստիճանաբար վերացան պատմության թատերաբեմից: Այստեղ պատմիչը Հոնաց աշխարհի ասելով հավանաբար նկատի է ունեցել Վոլգայի ու Կասպից ծովի մոտերքում եղած ժամանակվա բնակչության տարածքը (1217, 507):

**Սկյութացիները** հնում Սև և Կասպից ծովերից հյուսիս և հյուսիսարևելք ընկած տափաստաններում թափառող ռազմատենչ ցեղեր էին, որոնք մ.թ.ա. 7-րդ դարում արշավեցին դեպի հարավ և հարավ-արևմուտք (1503, 529):

Աշոտ Աբրահամյանը երբեմն վիմական արձանագրությունների նոր ու գիտական տվյալներով ճշգրտում է Ստեփանոս Օրբելյանի հաղորդածը, երբեմն էլ հենվում է այլ պատմիչների հաղորդած փաստերի վրա: Նա, օրինակ, ճշտում է, որ Վայոց ձորի անվանումը բոլորովին էլ կապ չունի VIII դարում տեղի ունեցած ահավոր երկրաշարժի

---

*«Եւ երկրորդ խնդիրն այս է, թէ զմարդ ոչ իշխանաբար ճանաչէք, այլ իրաւաբար գիտել զլաւն և զվատթարն, ընտրել զպիտանին և զանպիտանն, իմանալ զտոհմիկն և զանտոհմիկն, ունել առ լաւսն և պատուականս՝ զքաջն և զօգտակարն, արհամարհել և առ ոչինչ համարել զվատն և զանպիտանն. սիրել զվաստակաւորսն և ատել զանվաստակն, ունել ի մօտ զիմաստունս և խորհուրդս առնել, և զանմիտն ոչ մօտեցուցանել, այլ և ի հրապարակէ ևս հալածել: Եւ յորժամ այս ամենայն այսպէս լինի՝ ամենայն իրք Արեւաց աշխարհիս աջող լինի և անսխալ» (Տե՛ս Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց..., Երևան, 1982, էջ 390):*

<sup>21</sup> Փարիզի եկեղեցիներից մեկում պատին նկարված է Աթթիլայի հարձակումը Փարիզի վրա – Պ. Ս. :



հետ, որովհետև նույն գավառը այդպես կոչվում է 5-րդ դարի պատմիչներ Խորենացու ու Եղիշեի մոտ (16, 409-410):

Մովսես Խորենացի

«Իսկ զաթոռ եպիսկոպոսապետութեանն ետեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելոյն Մեսրոպայ՝ նորին աշակերտն Յովսէփ քահանայ ի **Վայոց ձորոյ**, ի Խողոցիմ գեղջէ»<sup>22</sup>

Եղիշե

Սուրբն Յովսէփ ի **Վայոց ձորոյ**՝ ի գեղջէ Հողոցմանց:<sup>23</sup>

Երկար կարելի է գրել նշանավոր գրաբարագետ ու լեզվաբան Աշոտ Աբրահամյանի «Սյունիքի պատմություն» երկի ծանոթագրությունների մասին: Բավարարվենք այսքանով: Պարզ է մի ճշմարտություն: Ցանկացած գիտաճյուղ շարունակական զարգացման մեջ է. նույնը վերաբերում է նաև հայագիտությանը: Աշոտ Աբրահամյանն իր գիտական ծանոթագրություններով առավել մեծ արժեք է հաղորդել Ստեփանոս Օրբելյանի բարձրարժեք պատմությանը՝ սերունդներին հանձնելով ավելի ճշգրտված տարբերակ:

---

<sup>22</sup> Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 358:

<sup>23</sup> Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, էջ 358:

ՀԱՎԵԼՎԱԾ

**ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ**  
**ԱՂԱՆԴՆԵՐԻ ՀԵՐՔՈՒՄԸ**

**ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ**  
**ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԱՂԱՆԴՆԵՐԻ ՀԵՐՔՈՒՄԸ<sup>1</sup>**

**Ա**

Երբ մեկը խոսի աներևույթի և նրա հավիտենական գործության մասին, քանի որ (ինքը) մարմնավոր է ստեղծված, պետք է միտքը հստակի, մտածմունքները մաքրի, հոգեկան խռովքը վերացնի, որպեսզի կարողանա հասնել այն բանին, ինչ որ նպատակադրել է: Այսպես էլ նա, ով ցանկանում է նայել արեգակի ճառագայթներին, պիտի սրբի ու հեռացնի աչքերի պղտորությունն (առաջացնող) կեղտն ու ճպուռը, որպեսզի այդ աղտոտությունները, որ երևում են բերքի շուրջ, պայծառ լույսին նայելու արգելք չլինեն:

Եվ արդ՝ որովհետև մի էությունը անքննելի է ու բնությամբ անմատչելի, նրա անքննելիության նկատմամբ անկարողության ապացույց պետք է ներկայացնել, իսկ նրա գոյության վերաբերմամբ՝ գիտակցական հավատ և ոչ քննական: Որովհետև նա, որ կա, պետք է որ մշտնջենական ու անսկիզբ լինի, որը ոչ ոքից գոյության սկիզբ չի առել, իրենից վեր էլ ոչ ոք չկա, որ հարկ լինի իրեն պատճառ կարծել կամ մտածել, թե նրանից է գոյանալու սկիզբ առել: Որովհետև ոչ ոք չկա նրանից առաջ և ոչ ոք՝ (նրանից) հետո՝ նման նրան, չկա և նրան հավասար ընկեր, ոչ էլ կա նրան հակառակ էություն, ոչ՝ ներհակ գոյություն, չկա և նրա կարիքների համար նյութ մատակարարող գոյացություն, և ոչ որևէ նյութ, որից ստեղծեր՝ ինչ որ ստեղծելու էր. այլ ինքն է պատճառը բոլորի, որ ստեղծվեցին՝ անգոյությունից գոյության (բերվելով), ինչպես՝ վերին երկինքը ու ինչ որ գտնվում է երկնքում և երևացող երկինքը, որ ջրերից է կազմված, և երկիրը ու նրանից (առաջացած) և նրա մեջ (եղող) ամեն բան. ամեն ինչ նրանից է, իսկ ինքը ոչ ոքից չէ: Նա լինելու սկիզբ է տվել աներևույթ-անմարմիններին և երևացող-մարմնավորներին՝ յուրաքանչյուրին ըստ դասի: Նա ունակ է ինչպես կենդանությունը տալու, նույնպես և իր անստեղծ էության գիտությամբ իր արարածներից յուրաքանչյուրին ըստ իր էության կատարելության բերելու: Նա ոչ միայն նրանով է զարմանալի, որ անգոյությունից գոյության բերեց անգոններին ու ոչնչությունից ինչի վերածեց ոչինչներին, այլև (նրանով), որ անեղծ ու հաստատ է պահում ստեղծվածներին, որոնց և հենց սկզբում աննախանձաբար տվեց կենդանությունը՝ իր բարերարությունը ցույց տալու համար:

---

<sup>1</sup> «Եղծ աղանդոց» երկի հատվածները քաղված են Ա.Ա.Աբրահամյանի թարգմանության 1970թ. հրատարակությունից:

Որովհետև (նա) որևէ բանի կարոտ մեկը չէր, որ այն պատճառով միայն իրեն պահեր կենդանությունը, թույլ ու անզոր էլ չէր, որ միայն իր համար թաքցներ զորությունը. ոչ էլ գիտության պակաս ուներ, որ միայն իրեն պահեր գիտությունը. կարոտ չէր նաև իմաստության, որ երբ ուրիշներին բաժաներ իր իմաստությունը, պակասության կասկած առաջ գար: Այլ կենդանի է (նա) և կենդանության աղբյուր, բոլորին կենդանություն է տալիս, ինքն էլ մնում է լրիվ ու անսպառ կենդանության մեջ. ուժեղացնում է թույլերին հզոր ուժով, իսկ ինքը չի թուլանում ուժեղացնող ուժից. պարզում է գիտություն բոլոր անգետներին և ինքն ամբողջապես պարունակում է իր մեջ ամենագետ գիտությունը. բոլորի մեջ բխեցնում է անհատնում իմաստությունը և ինքը մնում է անխախտելի՝ ամենահնար իմաստության մեջ:

Եթե մշտաբուխ աղբյուրները, որոնք նրա հրամանով են հաստատվել, շարունակ բխում են ու չեն սպառվում, որոնց բխումները ուրիշների կարիքներն են բավարարում, և իրենք նույն հորդության մեջ մնում են մշտնջենական, (ապա) որքան առավել է նա, որը նրանց հորդ բխումները հորինեց, որը բարության աղբյուրն է և գեղեցիկ ստեղծեց այն ամենը, ինչ որ ստեղծեց՝ բանականներին ու անբանականները, մտավորներին ու մտազուրկները, խոսողներին ու չխոսողները, ասուններին ու անասունները: Եվ բանականների ու մտավորների համար սահմանեց, որ յուրաքանչյուրն իր առաքինություններով (ինքնուրույնաբար) ստանա բարությունը և ոչ թե գեղեցկությունը, որովհետև գեղեցկություն տվողն ինքն է, իսկ բարության համար ազատակամությունը պատճառ դարձրեց:

## Բ

Սակայն արարածներից ինչ որ գեղեցիկ է, այն բարի արարչից (ստեղծված) է կարծվում ոմանց կողմից, ինչպես՝ հույն հեթանոսների, պարսիկ մոզերի ու հերձվածողների կողմից, որոնք բարուն հակառակ մի չար էություն են ընդունում՝ հյուլե անվանելով, որը թարգմանվում է նյութ: (Այդ կարծիքի հանդեպ) մեր առաջին ու սկզբում ասվող պատասխանն այն է, որ բարերար արարչից չար բան չի ստեղծված, և չկա որևէ չար բան, որ էությամբ չար լինի. և չկա ոչ թե չար բաների, այլ՝ բարիների արարիչ:

Եվ այդ՝ արարածներից ո՞րն են բարի կարծում կամ ո՞րը՝ չար. որովհետև շատ անգամ ինչ որ բարի են կարծում, միայնակ, առանց ուրիշի հետ խառնվելու, վնասակար է լինում: (Դա) բոլորի կողմից ընդհանրապես հաստատվում է: Արեգակը թեև բարի է, սակայն առանց օդի զուգակցության այրող ու չորացնող է: Նույնպես և խոնավ բնույթի լուսինը՝ առանց արեգակի ջերմության խառնուրդի՝ վնասակար ու ապականիչ է: Եվ օդը՝ առանց ցողի խոնավության ու (արեգակի) ջերմության՝ վնասակար և փչացնող է: Ջրերը ևս երկրի հողը ողողում ու փչացնում են, բայց հողն առանց ջրերի պատռվում ու ճաքճքում է: Եվ այնպես չորս տարրերը, որոնցից կազմված է այս աշխարհը,

ատանձնակի միմյանց խաթարող են, բայց զուգակցի հետ համադրված՝ օգտակար ու շահավետ են դառնում: Մա, որ այսպես է, հայտնի է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են սովորել:

Ուրեմն և կա մի գաղտնի գորություն, որ (մեկմեկու) փչացնողները իրար հետ խառնելով օգտակար դարձրեց միմյանց համար: Եվ ովքեր ողջամիտ են, ոչ թե շարժուններին, այլ շարժողին պիտի փառաբանեն, ոչ թե կառավարվողների, այլ կառավարողի, ոչ թե գնայունների, այլ գնալ տվողի վրա պիտի զարմանան. որովհետև հենց նրանք յուրաքանչյուրն իր փոփոխություններով, հայտնի են դարձնում, թե կա մեկը, որ փոփոխում է իրենց. արեգակը՝ ծագելով, բարձրանալով և դեպի մայրամուտ գնալով, լուսինը՝ մեծանալով-լրանալով ու նվազելով, արարածներից մյուսներն էլ, յուրաքանչյուրն ըստ իր բնույթի, շարժվելով ու դադարելով: Հետևաբար առողջ մտքին հատկանշական չէ շարժողին ու փոփոխողին թողնել և շարժուններին ու փոփոխվողներին պաշտել ու երկրպագել. քանի որ շարժվողը ու փոփոխվողը ինքնագոյակ չէ, այլ կամ առաջացել է մեկից կամ մի բանից և կամ ստեղծված է ոչնչից: Եվ նա, որ գոյություն ունի ու շարժում է բոլորին, ինքը չի շարժվում ու չի փոփոխվում, որովհետև ինքնագոյակ է ու անշարժական:

### **ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ**

### **ՊԱՐՄԻՑ ԿՐՈՆԻ ՀԵՐՔՈՒՄԸ**

### **Ա**

Քանի դեռ բնավ ոչինչ գոյություն չունեք,- ասում են,- ո՛չ երկինքը, ո՛չ երկիրը, ո՛չ էլ մյուս արարածները, որ երկնքում կամ երկրի վրա են, կար մեկը՝ անունով Ջրվան, որը թարգմանվում է բախտ կամ փառք: Հազար տարի զոհ արեց նա, որպեսզի, թերևս, իրեն մի որդի լինի՝ Որմիզդ անունով, որը ստեղծի երկինքը, երկիրը ու այն ամենը, ինչ որ նրանց մեջ է: Եվ հազար տարի զոհ անելուց հետո սկսեց մտածել՝ ասելով. «Որևէ օգուտ կա՞, որ այս զոհն անում եմ, կունենա՞մ Որմիզդ որդի, թե իզուր եմ ջանում»: Եվ մինչ նա այսպես մտածում էր, Որմիզդն ու Արհմնը սաղմնավորվեցին իրենց մոր արգանդում, Որմիզդը՝ այն զոհ մատուցելուց, իսկ Արհմնը՝ երկմտելուց: Ապա Ջրվանն իմանալով ասում է. «Երկու որդիներ կան որովայնում. նրանցից ով որ շուտ հասնի ինձ մոտ, նրան թագավոր կդարձնեն»: Եվ Որմիզդը, իմանալով հոր մտադրությունը, հայտնեց Արհմնին՝ ասելով. «Մեր հայր Ջրվանը մտածեց, թե մեզանից ով շուտ գնա իր մոտ, նրան թագավոր կդարձնի»: Արհմնը, այդ լսելով, ծակեց որովայնը և ելավ կանգնեց հոր առաջ: Նրան տեսնելով՝ Ջրվանը չիմացավ, թե ո՞վ է, ուստի հարցրեց՝ «Ո՞վ ես դու»: Իսկ նա պատասխանեց՝ «Ես քո որդին եմ»: Ջրվանը նրան ասաց՝ «Իմ որդին անուշահոտ ու լուսավոր է, իսկ դու խավար ու գարշահոտ ես»: Մինչ նրանք միմյանց հետ այսպես խոսում էին, իր ժամին Որմիզդը ծնվեց լուսավոր ու անուշահոտ, եկավ կանգնեց Ջրվանի առաջ: Եվ

Ջրվանը, տեսնելով նրան, իմացավ, թե իր որդի Որմիզդն է, որի համար զոհ էր անում: Եվ վերցնելով բարսմունքը, որ բռնում էր իր ձեռքում և նրանով զոհ անում, տվեց Որմիզդին և ասաց՝ «Մինչ այժմ ես էի քեզ համար զոհ անում, այսուհետև դու պիտի անես ինձ համար»: Եվ երբ Ջրվանը բարսմունքը տվեց Որմիզդին ու օրհնեց նրան, Արհմնը մոտեցավ Ջրվանին ու նրան ասաց՝ «Այնպես չուխտեցի՞ր, թե քո երկու որդիներից ով որ շուտ հասնի քեզ մոտ, նրան թագավոր կդարձնես»: Իսկ Ջրվանը պայմանը չդրժելու համար Արհմնին ասաց՝ «Ա՛յ խաբեբա ու չարագործ, թող քեզ տրվի ինը հազար տարվա թագավորություն, Որմիզդն էլ քեզ վրա արքա նշանակած լինեմ, իսկ ինը հազար տարուց հետո Որմիզդը թագավորի և ինչ ցանկանա անել՝ անի»: Այն ժամանակ Որմիզդն ու Արհմնը սկսեցին արարածներ ստեղծել: Եվ այն ամենը, ինչ Որմիզդն էր ստեղծում, բարի էր և ուղիղ, իսկ ինչ որ Արհմնն էր ստեղծում, չար էր ու ծուռ:

## Բ

Այսպիսի անհավատալի և տխմարների մտքով կցմցված ցնդաբանություններին բոլորովին էլ պետք չէր պատասխան տալ, որովհետև բավական էր նրանց անմտությունը ցուցադրել հենց իրենց այն ասածներով, որոնք միմյանց հակամարտ են ու հակասական: Բայց որովհետև այս կերպ քեշի առաջնորդները մեծարված կերևային իրենց ենթարկվողներին և խիստ նեղելով՝ խորխորատ կզցեին սրանց, (ուստի) անհրաժեշտ է պատասխանել ու ցույց տալ, որ ոչինչ ավելի չեն ասում, քան Մանին (ասաց), որին իրենք մորթազերծ արեցին: Որովհետև նա (Մարին) երկու՝ բարու ու չարի նախասկիզբ է ընդունում և այն էլ ոչ թե հղիությամբ ու ծնունդով, այլ՝ ինքնակա և միմյանց հակառակ, նրանք էլ նույնն են ասում՝ Ջրվանի տենչանքով, (բայց) հղիությամբ ու ծնունդով: Եվ թե երկուսն էլ նույն կրոնն ունեն, մոզերը զանդիկներին ինչո՞ւ են ասում, եթե ոչ նրա համար, որ վարքով են միմյանցից տարբեր, թեպետ ձևականորեն և ոչ թե իսկությամբ: Սակայն կրոնով երկուսն էլ մեկ են, նրանք երկարմատյաններ են, սրանք՝ նույնպես. նրանք արևապաշտներ են, սրանք՝ արեգակի ծառաներ. նրանք կարծում են, թե բոլոր անշունչները շունչ ունեն, սրանք էլ նույն ձևով (նույնն) են հասկանում:

Բայց քանի որ Մանին կամեցավ նրանցից,- և ոչ միայն նրանցից, այլև բոլոր աղանդները (դավանողներից),- բարձր վարք ցույց տալ կեղծավորությամբ, իբր թե միանգամայն զերծ է ցանկասիրական կրքերից, ուստի աղջիկներին ձեռնահարելու մեջ մեղադրվեց և մորթազերծմամբ մեռավ: Այսպիսով պարզ է, որ (մանիքեականներն ու զրվանականները) միայն վարքով են միմյանցից տարբերվում: Թեև նրանք կեղծող են, և սրանք՝ զեղիս ու բացահայտորեն փափկասեր, սակայն կրոնով նույնն են:

## Գ

Այժմ մենք, թողնելով նրանց (մանիքեականներին), հարցնենք սրանց (մոզերին)՝ Ջրվանը, որին ամեն ինչից առաջ են համարում, կատարյալ մեկն էր, թե՞ անկատար: Եթե

ասեն, որ կատարյալ էր, կլսեն, թե կատարյալը ումի՞ց կարիք կունենար խնդրելու որդի, որը զար և երկինքն ու երկիրը ստեղծեր. քանի որ եթե կատարյալ լիներ, հենց ինքը կարող էր ստեղծել երկինքն ու երկիրը: Իսկ եթե անկատար էր, պարզ է, որ նրանից վեր կար մեկը, որ կարող էր նրա թերակատարությունը լրացնել: Եվ եթե իրենից վեր կար մեկը, նա պիտի ստեղծեր երկինքն ու երկիրը և այն ամենը, ինչ որ նրանց մեջ են՝ իր բարերարությունն ու զորությունը ցույց տալու համար և ոչ թե Ջրվանին որդի շնորհեր, որը երկինքն ու երկիրը և նրանց մեջ եղող ամեն ինչ ստեղծեր:

«Բայց,- ասում են,- փառքի համար էր զոհ անում»:

Հարցնենք՝ փառքը մեկի կողմի՞ց էր շնորհված նրան, թե՞ (ինքը) մշտնջենական լինելու պատճառով էր փառավոր: Եթե փառքը մեկի կողմից էր պարգևած նրան, պետք է կարծել, որ կար մեկը նրանից վեր՝ ավելի հզոր ու ավելի փառավոր, որից փառքը հասավ նրան: Իսկ եթե նրանից վեր մեկը չկար, հազարամյա զոհ անելը իզուր էր. որովհետև փառքը գոյավոր բան չէ, այլ մեկի հաջողությունից է փառք կոչվում, ինչպես որ մեկի անհաջողությունից էլ թշվառությունն է անվանվում: Երկունս էլ դեպքերի արգասիք են և ոչ թե հաստատ գոյակներ:

Մի բան ևս: Եթե դեռ ստեղծված չէին արեգակը և լուսինը, որոնցով ժամերն ու օրերը, ամիսներն ու տարիներն են որոշվում, հազար տարին որտեղի՞ց էր երևում: Քանի որ մեջտեղում չկային լուսատուները, որոնք օրերի, ամիսների ու տարիների թիվը պիտի ցույց տային, ուրեմն պարզ է, որ անմտությամբ լի են այն շաղակրատանքները:

Դարձյալ՝ եթե չկային երկինքը, երկիրը և ինչ որ նրանց մեջ էր, որտե՞ղ կամ ինչո՞վ էր զոհ անում (Ջրվանը): Երբ չկար երկիրը, ոչ էլ նրանից (բուսնող) տունկերը, բարսմունքը, որտեղի՞ց էր գտնում իր ձեռքում բռնելու. կամ թե ի՞նչ էր զոհում, քանի որ անասունները դեռ ստեղծված չէին: Եվ որը ամենից անմիտ բանն է, «հազար տարի,- ասում են,- զոհ արեց. և հազար տարուց հետո երկմտեց՝ ասելով. «Կլինի՞ ինձ Որմիզդ որդի. եթե չլինի, իզուր տեղը պիտի չարչարվեմ»: Եվ դա ցույց է տալիս, որ Ջրվանը տկար, կարիքավոր ու տգետ էր. չարիքների պատճառն էլ նույն ինքն է և ոչ թե Արիմնը: Որովհետև եթե նա երկմտած չլիներ, ինչպես ասում են նրանք, չէր լինի Արիմնը, որին չարիքների արարիչ են հռչակում իրենք: Բայց ինքը երկմտեց, որը անհավատալի է, լիապես անկարգ բան է:

Քանի որ մեկ աղբյուրից երբեք երկու տեսակ ջուր չի բխում՝ մեկն անուշ, մյուսը՝ դառը, ոչ էլ մեկ ծառից երկու տեսակ պտուղներ (են լինում)՝ մեկը քաղցր, մյուսը՝ դառը, ուստի եթե Ջրվանին ընդունում են քաղցր, չպետք է դառը պտուղը՝ Արիմնին, նրանից (ծնված) համարեն, իսկ եթե դառն են հաշվում, պատշաճ չէ, որ քաղցր պտուղը՝ Որմիզդին, նրանից (սերված) կարծեն: Եվ նրանց համար հարմար է զալիս աստվածային խոսքը, թե՛ «Կամ արե՛ք ծառը քաղցր ու նրա պտուղը՝ քաղցր և կամ արե՛ք ծառը դառը ու նրա պտուղը դառը, որովհետև ծառից է իր պտուղը ճանաչվում»:

Եվ եթե արարածները մնում են յուրաքանչյուրն իրենց հորինվածքում ու երբեք դուրս չեն գալիս իրենց համար դրված սահմաններից, «ապա առավել ևս Ջրվանը, եթե որ մշտնջենավոր մեկն էր ու արարածներ ստեղծելու հնարներ էր որոնում՝ թե՛ անձամբ, թե՛ իր որդու կամ մի ուրիշի միջոցով, ինչպես ասում են, պարտավոր էր կարգ ու կանոն ցույց տալ և ոչ թե անկարգություն:

Որովհետև երբեք չտեսանք, որ կովերը էշեր ծնեն, էշերը՝ եզներ, ոչ էլ գայլերը՝ մաքիներ, մաքիները՝ աղվեսներ, առյուծները՝ ձիեր, ձիերը՝ օձեր. սակայն մի ծնունդ կա միայն, որը մարդիկ բնության օրենքներից դուրս հնարեցին՝ ձիերից ու էշերից ջորիներ ծնելը: Նրանք էլ անսերմ ու անծնունդ են, քանի որ ոչ թե աստծուց են ստեղծվել, այլ մարդկանց հնարամտությունից (են առաջ գալիս): Այսպիսով՝ եթե Ջրվանը տավար էր, կարիճ Արհմնին ինչպե՞ս էր ծնում, և եթե գայլ էր, գառ Որմիզդին ինչպե՞ս ծնեց. չէ՞ որ մարդկանց մտքի ցնդաբանություններ են (դրանք):

Քանի որ Ջրվանը ևս մարդ է եղել, մի քաջ տղամարդ՝ տիտանների օրոք, և հույները, արիները ու բոլոր հեթանոս ժողովուրդներն էլ սովոր են քաջերին դյուցազուններ համարել, (ուստի) պարսից կրոնը կցմցողը տեսնելով, որ իր երկրի մարդիկ (նույն ձևով) նրան (Ջրվանին) աստված են համարում, (ասում է՝) «Ես պիտի կարծել տամ, որ երկնքի, երկրի ու բոլոր արարածների ստեղծումը նրանից է»:

Խոսքիս ճշմարիտ լինելը նրանից է երևում, որ (կցմցողը) ըստ մարդկային բարքերի է հարմարեցնում քեշը և հղիության ու ծննդյան (հիմունքով) է կցմցում իր ուսմունքը: Որովհետև նախ ազդարարում է, թե բարի և չար երկու արարիչները մեկ հոր ծնունդներ են, և ապա մեջտեղ է բերում այն, թե մոր ու քրոջ հետ ունեցած սեռական գործողություններով են ստեղծվել լուսաստունները: Եվ դա՝ ոչ թե ուրիշ բանի, այլ մարմնասիրության ու ցանկասիրության պատճառով: Որովհետև տեսնելով, որ արիական ցեղը իգասեր էր, նրա նույն մեղկ բարքին համապատասխան նրա համար կրոն կցմցեց, որպեսզի իրենց աստվածների մասին լսելով, թե անվայել խառնակեցությունների են հետամուտ եղել, իրենք էլ, նրանց նմանվելով նույն անառակություններն անեն անխտիր, իսկ դրանից հեռու է և վեր է մնում աստվածայինը:

Որովհետև աստծուն պատշաճ է որդի ունենալ ոչ թե ամուսնությամբ, այլ հավիտենականությամբ, ինչպես որ մտքին (հատուկ է առաջ բերել) խոսքը, աղբյուրին՝ գետը, կրակին՝ տաքությունը, արեգակին՝ լուսավորությունը, ուստի այնպես չէ, ինչպես նրանք են հանդգնում ասել, թե փափագում էր, որ մի որդի ծնվեր իրեն, որի անունը Որմիզդ լիներ:

Օ՛ հիմարություն, դեռ մեջտեղը որդի չկար, և նա չսաղմնավորվածին ու չծնվածին անուն էր դնում: Բոլոր ծնունդներին անուններ են դնում ծնվելուց հետո, իսկ նա (Ջրվանը) ծնվելուց առաջ ինչպե՞ս էր նրան Որմիզդ անունը դնում: Բայց (գուցե ասեն,) թե հավատում էր, որ իսկապես իրեն որդի է ծնվելու: Իսկ եթե հավատում էր, ինչո՞ւ երկմտեց և իր երկմտանքով պատճառ դարձավ Արհմնի ծննդյան, որով չարիքներն



աշխարհ մտան: Եվ զարմանալին այն է, որ մեկը հազարամյա զոհաբերությամբ հազիվ ծնվեց, իսկ մյուսը հենց նոր երկմտելուց (ծնվեց):

Դարձյալ՝ նա, որ իմացավ, թե որովայնում երկու որդիներ կան, ինչո՞ւ այն էլ չիմացավ, որ մեկը բարի է, իսկ մյուսը՝ չար: Եվ եթե իմացավ, բայց չոչնչացրեց չարին, (ուրեմն) ինքն է չարի պատճառը: Իսկ եթե այն չիմացավ, ինչպե՞ս կարելի է հավատալ, թե մյուսին ճանաչեց: Եվ եթե այն ժամանակ չիմացավ, (իսկ հետո,) երբ տեսավ նրան խավարին ու զարշահոտ, արդյոք այդ ժամանակ է՞լ չիմացավ: Սակայն և՛ իմացավ, և՛ տեսավ, և՛ թագավոր դարձրեց խավարայինին. (ուստի) ինքն է չարիքների պատճառը, որովհետև չոչնչացրեց չարին և դեռ թագավորությունն էլ տվեց նրան ինը հազար տարով: Եվ ո՞ւմ վրա թագավորեցրեց նրան (Արհմնին), եթե ոչ Որմիգդի կողմից ստեղծված բարի արարածների վրա, որպեսզի նրանց չարչարի՝ խառնելով նրանց հետ իր չար արարածներին:

«Սակայն,- ասում են,- Որմիգդին էլ թագավորեցրեց նրա վրա»:

Եթե Որմիգդը նրա թագավորը լիներ, ինչպե՞ս թույլ կտար, որ նա (Արհմնը) իր բարի արարածներին չարչարեր: Եթե հայրը որդու արարածներին չխնայեց՝ չարի ձեռքը տալով (նրանց), որդին իր արարածների նկատմամբ ինչո՞ւ չպիտի հոգ տանի. անկարողությա՞ն, թե՞ չարակամության պատճառով: Եթե անկարողության պատճառով վտանգից ազատ չի պահում, ապա նա ո՛չ այժմ է թագավորում, ո՛չ էլ հետո, ինչպես ասում են, կարող է հաղթել: Իսկ եթե չարակամության պատճառով է, դուրս է գալիս, որ չարիքների համար պատասխանատու է ոչ միայն հայրը, որ թագավորեցրեց չարին, այլև՝ որդին, որ համախոհ եղավ հորը և քաջալերող՝ չարին:

Դարձյալ՝ թե որ թագավորությունը հանձնեց որդիներին՝ մեկին ինը հազար տարով, մյուսին՝ հավիտենապես, (ապա) ինքը ո՞ր կարգում պիտի մնար: Չէ՞ որ երբ դեռ ոչինչ չկար, չկար նաև որևէ բանի թագավոր, որովհետև որևէ բանի արարչից էլ չկար: Իսկ երբ որդիները ծնվեցին, դարձան արարիչներ, մեկը բարիների, մյուսը՝ չարերի: Հենց նրանք էլ թագավորներ եղան, մեկը ժամանակավոր, մյուսը՝ հավիտենական: Այսպիսով Ջրվանը արարչությունից ու թագավորությունից դատարկ մնաց. և արարիչ չէ, որովհետև ինքը չի ստեղծել, թագավոր էլ չեղավ, որովհետև ո՞ւմ արարածներին պիտի թագավոր լիներ: Ուրեմն պարզ է, որ Ջրվանը երբեք գոյություն չի ունեցել և չկա: Որովհետև այն, որ գոյություն ունի, կա՛մ արարիչ է, կա՛մ արարած: Եվ քանի որ սա (Ջրվանը) ո՛չ արարիչ է, ո՛չ էլ արարած, (հետևաբար) երբեք էլ աստված չի եղել, չկա ու չի էլ լինի:

## ԺԴ

Դարձյալ՝ բախտավորության ու թշվառությունների պատճառը աստղերն են համարում, որպես թե ինչ-որ աստղեր գոյություն ունեն, և պատճառ դարձող ինչպիսի աստղեր որ հանդիպում են այդ աստղատներում, (այդ ժամանակ) նույնպիսի էլ ծնունդներ են լինում:

Ասում են՝ երբ աստղատանը առյուծն է, և (այդ ժամանակ) մարդ է ծնվում, նա թագավոր է դառնալու. երբ ցուլն է, և ծնվում է մեկը, նա հզոր ու բախտավոր է լինելու, երբ խոյն է, և ծնվում է մեկը, մեծատուն է լինելու, խոյի նման թավ ու բրդոտ. իսկ կարիճի ժամանակ ծնվողը չար ու մեղսագործ է լինելու: Եվ մյուսներն էլ ուրիշների համար զանազան իրողությունների պատճառ են լինում: Որպես թե, երբ Կռոնոսը աստղատունը մտնի, թագավոր կմեռնի, որը և, ինչպես ասում են, երկու անգամ եղավ Թեոդոս կայսեր ժամանակ: Թեև աստղագուշակները պնդել էին, թե թագավորը կմեռնի, բայց նա չմեռավ, որպեսզի խայտառակվի այն սուտումուտ հնարագիտությունը:

Արդ՝ նախ թող այն ասեն. այնպիսի գիշատիչ ու խոտաճարակ երկրային անասուններն ո՞վ հանեց երկինք, որ մարդկանց ծննդյան պատճառ լինեն. քանի որ նա, ով կարող է մեկի ծննդյան պատճառը լինել, իմաստությամբ պիտի բարձր լինի նրանից, որի (ծննդյան) պատճառն է: Այժմ պարզ մտքով նայենք ու տեսնենք, թե ո՞րն է բարձր, մա՞րդը, որ տիրում է անասունին, թե՞ անասունը, որ ծառայում է մարդուն, և ոչ միայն ծառայում է, այլև նրա կերակուրն է: Եվ տեսնում ենք, որ գազանների մի մասը փախչում, մի մասն էլ թաքնվում է խիտ անտառներում (գտնվող) բներում՝ հենց որ լսում են մարդկային ձայնը. որովհետև արարիչը մարդու ահն ու երկյուղը գցել է գազանների, սողունների, անասունների և թռչունների վրա՝ նրան առավել պատվելու համար: Նրա ստեղծումն էլ զարմանալի ձևով է ներկայացնում, այսինքն թե՛ այնպես ստեղծեց՝ որպես ձեռքով, (նրա մեջ) կենդանության շունչ փչեց՝ որպես բերանով: Եվ դրանով հայտնի է դարձնում, որ նրան առավել պատվական է ցույց տալիս:

Իսկ որ աստված անդամակազմ մարմիններից վեր է, դա հայտնի է ճշմարտասերներին: Եվ եթե, ինչպես իրողությունների փորձն է ցույց տալիս, գազաններն ու անասունները մարդու համար ստեղծվեցին, իսկ ինչպե՞ս կլինեք, որ (նրանք) երկինք բարձրանային ու մարդկանց ծննդյան պատճառ դառնային: Աստղերը կենդանությունից այնքան են հեռու, որքան ճրագը, որ մարդկանց կողմից պատրաստված է՝ գիշերը տանը լույս տալու համար: Եվ ոչ կենդանիները ինչպե՞ս կարող են կենդանիների ծննդյան պատճառը լինել:

«Բայց եթե (աստղերը) կենդանիներ չլինեն,- ասում են,- շարժուն չէին լինի, իսկ քանի որ շարժվում են, պարզ է, որ կենդանիներ են»:

Այժմ թող լսեն. եթե ամեն շարժուն բան կենդանի լինի, ապա ջրերն էլ, որ հոսում են, կենդանի պիտի համարվեն. կրակը ևս, շարժվելու պատճառով, կենդանի պիտի կարծվի. օդն ու քամիները, փչելու պատճառով, կենդանի պիտի հաշվվեն. այլև (կենդանի պիտի համարվեն) տունկերն ու խոտաբույսերը, որոնք թեև դանդաղընթաց են, սակայն իրենց աճմամբ շարժուն են երևում, այսպիսով՝ ինչպես որ ամեն շարժվող մտային ու հոգեկան կենդանություն չունի, նույնպես էլ ո՛չ արեգակը, ո՛չ լուսինը, ո՛չ աստղերը և ոչ իսկ երկինքը, որտեղով նրանք շրջում են, մտային ու հոգեկան կենդանություն չունեն: Այլ երկինքն ու երկիրը անշարժ անոթներ են՝ հաստատված արարչի կողմից, տեղավորելու

այն ամենը, ինչ կա իրենց մեջ, և լուսատուները, որպես վառված ճրագներ այս մեծ տան միջից խավարը հեռացնելու համար են: Նրանք պետքական բնակավորներ են՝ (սահմանված) իրենց արարչի հրամանով՝ բոլոր կենդանիների վայելքի համար. և իրենք իրենց համար չեն, որովհետև չգիտեն՝ իրենք գոյություն ունե՞ն, թե ոչ: Այդպես էլ երկինքը, երկիրը, ջրերը, փայտերը և քարերը (նրա համար են), ինչի համար որ ստեղծված են և իրենք իրենց համար չեն, որովհետև չգիտեն՝ գոյություն ունե՞ն, թե ոչ, քանի որ մտավոր ու բանական չեն:

Դարձյալ՝ նրանց ասելով՝ երբ առյուծը լինի աստղատանը, թագավոր է ծնվելու: Եթե այդպես լիներ, շատ անգամ բազմաթիվ թագավորներ պիտի ծնվեին, որովհետև երբ առյուծն աստղատանն է գտնվում, ոչ թե լոկ մեկ, այլ բազմաթիվ մարդիկ են ծնվում:

Եվ եթե իսկապես առյուծը լիներ թագավորների ծննդյան պատճառ, ապա թագավոր կդառնար ոչ թե թագավորի որդին, այլ նա, որի ծնունդը կգուցադրի պեր առյուծի՝ աստղատունը մտնելուն: Բայց մենք տեսնում ենք, որ թագավորի որդին է թագավոր դառնում, ինչպես Դավթի որդի Սողոմոնն իր հոր աթոռը նստեց, նրա որդին էլ՝ նրա աթոռը, և այսպես հաջորդաբար Հուդայի թագավորների շարքը ձգվեց մինչև Մակաբայեցիները: Նույնպես և ասորեստանցիների ու բաբելացիների թագավորությունը կարգով ժառանգում էին հորից որդի: Ինչպես նաև ոմն Մասանից Մասանյանները հորից որդի կարգով ստացան թագավորությունը՝ մինչև այսօր. իսկ երկնքում առյուծն աստղատունը մտած չեղա՞վ, որ կարողանար արևելյան երկրում թագավորությունը ուրիշ ցեղի փոխանցել:

## ԺԵ

Եվ պարզ է, որ աստղը չէ պատճառը ինչպես թագավորության, այնպես էլ հզորության կամ հարստության, մանավանդ որ տեսնում ենք հարուստներին աղքատացած և աղքատներին՝ հարստացած: Մի՞ թե այն էլ կարող են ասել, որ միևնույն աստղը կարող է և՛ հարստության ու աղքատության, և՛ զորեղության ու անզորության պատճառ լինել, քանի որ հզորներին ևս տեսնում ենք հաճախ անզորացած ու անզորներին՝ զորեղացած, ինչպես և չարերին՝ խելոքացած, խելոքներին՝ չարացած:

**ՄՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ**  
**ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ<sup>1</sup>**

ԿԶ

**ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ՄԵԾ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ, ՈՐՊԻՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅՍ  
ԿՈՂՄԵՐԸ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ, ԱՅԼԵՎ ԲԱԶՄԱԹԻՎ ԶՐՈՒՅՅՆԵՐ ԶԱՆԱԶԱՆ ԴԵՊՔԵՐԻ  
ՈՒ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

...Իսմայելցիների անթիվ բազմության հանդեպ Լիպարիտի գորքը չնչին էր երևում: Նրա զինվորները նրանց մոտ թվում էին մատակարարողներ և [մարտում ընկածների] զենքերը հավաքողներ: Անպարտելի առաջամարտիկ քաջ Լիպարիտը այդ տեսնելով քաջալերեց իր գորքին՝ ասելով. «Մի՛ վախենաք, այլ միայն գոտեպնդվեցե՛ք Քրիստոսի անվամբ և խաչակնքվեցե՛ք խաչի նշանով, և մերը կլինի հաղթանակը»: Ու ինքն էլ իջնելով ձիուց ծունր դրեց, խաչակնքեց սուրբ խաչի նշանով, ապավինեց Քրիստոսին, պարանոցին կապեց փրկչական խաչի մասունքներից ու այդպես [նախապատրաստվելով և] զինվելով հեծավ արագաքայլ ձին: Ոսկեզարդ վահանը գցել էր թիկունքին, ճկուն նիզակը բռնել ձախ ձեռքում, կոնքն ի վար [կախել] ահավոր վաղորդ՝ դարբնի կռանի կամ քարհատի կտցավոր սակրի նման: Անցնելով պատերազմողների համախմբված տեղը՝ հպարտորեն արշավում էր այս ու այն կողմ: Նրա ոսկեկուռ զրահից ու սաղավարտից ճառագայթներ էին ցայտում, ինչպես արեգակից:

Առյուծի նման մոնչում ու գոռում էր. հակառակորդի կողմից մենամարտիկներ էր պահանջում՝ ասելով. «Ես արխագացի Լիպարիտն եմ, պարսից և արյաց քաջեր, եկե՛ք նախ միմյանց հետ մենամարտենք»: Չնայած որ շատ անգամ պահանջեց, բայց ոչ ոք չհամարձակվեց նրա դեմ դուրս գալ: Լիպարիտը որտեղ որ սլանում էր, արծվի նման էր վրա հասնում: Նրանք ետ-ետ գնալով իրար ոտնատակ էին տալիս, տրորում: Այնուհետև Լիպարիտը տեսնելով, որ հակառակորդը սրտաբեկվեց, ուժն էլ սասանվեց, դիմեց իր գորքին, քաջալերեց ու առաջ շարժեց: Ահեղ աղաղակ բարձրացնելով՝ [կողմերը] խառնվեցին միմյանց. ճակատամարտ տեղի ունեցավ այնպիսի դողդոջունով, որ թվում էր, թե ամպերի որոտում է, կայծակների ճայթյուններ են: Ինքը՝ Լիպարիտն էլ որպես հրախառն ամպ մտնում ու ելնում էր՝ շատերին կայծակնահար անելով. և ինչպես որ հրդեհն է եղեգնուտով փոթորկալից անցնում, ձեռքում էր հակառակորդի գորքը, անցնում այն կողմ և աջ ու ձախ արյան գետեր էր հոսեցնում. դիակների կույտեր էր առաջացնում. այդ այլազգիներին ջոկատ առ ջոկատ մասնատում էր և ինչպես նապաստակների խմբեր դիաթավալ անում դաշտի մեջ: Եվ այսպես կոտորելով՝ քաջ Լիպարիտը մեր աստված

<sup>1</sup> Հավելվածի նյութերն ըստ՝ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Երևան, 1986:

Հիսուս Քրիստոսի գործությամբ հաղթեց իսմայելացիներին, կենդանի մնացած սակավաթիվ մարդկանց էլ փախուստի մատնեց:

## **ՀԱ**

### ***ՄԵՐ ՆՎԱՍՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԵՐՋՈՒՄ ՍՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՄԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆՄԱՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ, ԱՅԼԵՎ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՆՑՔԵՐԻՆ [ՎԵՐԱԲԵՐՈՂ] ԶՐՈՒՅՑՆԵՐ***

Եվ այժմ, ո՛վ եղբայրներ, ես այստեղ պիտի հիշատակեմ իմ սրտի խոցվածք. այն, որ այս գործի շարադրումից մի քիչ առաջ մեզ վրա հասավ անանց սուգ՝ իմ սիրելի կրտսեր եղբայր Փախրադոլան երիտասարդական զարդարուն և գեղեցիկ հասակում, երբ նորաբույս մորուքը թխությամբ սկսել էր փայլփլել՝ բոլորելով վայելչագեղ ծնոտները, սիրտը զվարճությամբ ու խնդությամբ նախապատրաստվում էր քաղցր ու զվարթ կյանքի վայելման, կամքը՝ իշխանական փառքի, թափ ու թռիչքի ձգտման, հանկարծ ենթարկվեց օրհասին: Մահը կոտրեց սլացիկ բույսը, արմատախիլ արեց ծաղկափթիթ տունկը, անժամանակ տարավ իմ բաղձալիին, որը և գատվելով մեզանից, այս աշխարհից գնաց առանց որևէ հիշատակ թողնելու:

## **ՀԳ**

### ***ՆՈՒՅՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՍՈՒՅՆ ԳՐՔԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ***

Ամեն ինչի սկիզբն ու ավարտը աստված է, որովհետև ամեն բան նրանից սկսվելով նրանով է առաջ տարվում ու նույնով էլ ավարտվում, ինչպես որ կարելի է տեսնել կարկինով գծվող շրջագծի բոլորումը, որը որտեղից սկսվում է, նույն կետին էլ հանգում է ու միանում՝ իր մեջ ընդգրկելով բազմաթիվ մասերը: Հենց այդ ձևով էլ պետք է պատկերացնել շնորհը, որը, բխելով հորդառատ ականակիտ աղբյուրից, անցնում է ամենքի միջով՝ յուրաքանչյուրին համապատասխան մասնավոր բաժին տալով: Եվ այդպես բոլորի մեջ օգուտ ու օգտակարություն առաջ բերելով՝ ինքը նույն հստակությամբ միանում է իր բխման ակունքին: Ըստ այդմ էլ՝ և ես՝ շնորհներով երկնային, բարքով երկրային, ձևով աստվածային, վարքով եղեռնային, տեսքով կենսատու, ոգով կենսազրկիչ, անվամբ քահանայազուլիս, բանսարկուի գործազուլիս, աստվածային շնորհներից ստանալով՝ կամեցա մի փոքր օգտակար գործ կատարել. սկսելով աստծով նրանով առաջ տարա, նույնով էլ ավարտեցի:

Արդ՝ գոհունակություն և փափոք բոլոր էություններիս արարչին, անասելիին և անհասանելիին, առատաբաշխ պարգևիչին, ամենիս խնամատարին. երկնային հրեղեն էակներից ու նյութեղեն, տարրակազմ կենդանի երկրածիններիցս, բոլոր տեսակի ստեղծականներից՝ ընդհանրապես գոյացական արարածներիցս, անսահման բյուրերով, անհասանելի և անվերջանալի օրհնություն և, պատի՛վ և երկրպագություն և նրան, որ կարողություն տվեց իմ թերավարժ ու տհաս մտքին, ցավալից, տարտամ, ծովահեղձ հոգուս՝ տեսնելու այս գործիս ավարտը, հասնելու սկսածիս վերջին՝ այս դառն օրերում, սովախեղո ու մահաշունչ ժամանակներում, երբ մահը ցանկալի ու երանելի է, իսկ կյանքը՝ ատելի ու թշվառ, երբ բոլոր մարդիկ գիշերը ցավի, ցերեկը՝ ցնորքի մեջ են անցկացնում, նրանք բարի բանի ակնկալություն չունեն, այլ օրեցօր [վրա հասնող] սոսկալի վշտերի ու նեղությունների են սպասում: Եվ արդ՝ կարող ու հզոր հայր աստծու կամքով, միածին որդի Հիսուսի գթության շնորհներով և նախախնամող ու ազատարար սուրբ հոգու ողորմածությամբ ես՝ Քրիստոսի նվաստ ու բազմամեղ ծառա Ստեփանոսս, դարձյալ նույնի ողորմածությամբ Սյունիքի տասներկու գավառներին կարգված եպիսկոպոսս, նույնպես նույնի ներող կամքով նստելով այս նահագի մետրոպոլիտության գահին՝ վերացված և մերժված տեսա նախնիների անունն ու հիշատակը, հափշտակված և կորստյան մատնված՝ եկեղեցիների տիրույթները: Եվ վաղուց ի վեր ձգտելով սրանց նորոգմանը՝ ուզում էինք նաև պատմություն շարադրել: Ուստի և մեծ ջանք[եր]ով ու շատ չարչարանք[ներ]ով որոնումներ կատարելով՝ հավաքեցինք [տեղեկություններ] հայոց հին և նոր պատմագիրների [երկերից] նաև եկեղեցիների արձանագրություններից ու այն հնագույն թղթերից, որոնք պահված կային Տաթևի համակենտրոն վանքի ամուր պահեստարաններում: Որոշ նյութեր էլ վերցրեցինք ստուգապես տեղյակ մարդկանց պատմածներից, որոնք հավաստում էին անցքերով ու տեղերով: Ամենայն ճշտությամբ հետամուտ լինելով ստուգությանը՝ դեն նետեցինք փուչ զրախոսությունները, որ ընթերցողները չձանձրանան: Սեղմ շարադրանքով ու համառոտությամբ ցույց տվեցինք առավել պիտանին ու ավելի պատշաճը: Գրեցինք այս քաղցրախոս պատմությունը՝ նախնիների հիշատակագրությունների մեջտեղ բերումով: Սա ընդհանրական բնույթ չունի, այլ մասնավորապես [վերաբերում է] մեր Միսական աշխարհին և կոչվում է «Հիշատակաց մատյան»:

Եվ այս մատյանը թողեցինք որպես անջնելի հուշարձան ու գովելի հիշատակ գալիք ժամանակների համար՝ ի հաստատություն Սյունյաց փառահեղ աթոռիս, ի բարգավաճումն նրա խնամքին ենթակա եկեղեցիների: Եվ մեղսալից ձեռքերով վերցնելով՝ այս մտավոր պտուղը տարանք, ընծայեցինք տիրոջ տանը՝ որպես տրամադրիչ ընծա Տաթևի կաթողիկե և առաքելական եկեղեցուն ու նահանգիս բոլոր աստվածաբնակ տաճարներին: Եվ ահա ծնրադիր խոնարհված բազմադադակ ձայնով աղաչում-պաղատում ենք, ո՛վ երկնային փեսայի գերապանձ ու լուսաճեմ առագաստ, բոլոր սրբերով խնդրի՛ր քո սխրալի գլխավորին՝ ընդունելու իր աստվածային

գանձարանի մեջ շրթունքներիս այս պտուղն ու հոգուս ծնունդը՝ որպես հաճելի նվեր, եթե ոչ [հարուստների] թանկարժեք նվերների հետ. ապա՝ չքավորների, որոնք խորանի համար մազ էին մատուցում (Ելից ԼԵ, 21-26), նաև մի բաժակ սառը ջրի (Մատթ. Ժ, 42) կամ երկու լումայի (Ղուկ. ԻԱ, 2) հետ: Եվ իր եկեղեցին, այս շնորհավորելով, մեզ հնարավորություն կտա ակնկալություն ունենալու բարիքների առատորեն բաշխվող պարզևներ]ի՝ եթե ոչ կատարյալներ]ին, ապա գոնե փշրանքներին, որոնցով շներն էին կերակրվում: Ինձ տրված քանքարը բնավ էլ անգործածության չմատնեցի ու չթաքցրի, այլ, ըստ իմ կարողության, մի փոքր դրամաչափ գցեցի դրամափոխիչի սեղանին (Մատթ. ԻԵ, 27), ուստի [իմ մասին] թող չլսեմ, թե «Չար և վատ ծառա է», այլ երեկո չունեցող այն մեծ օրը, երբ խոսքերը վերջանում են ու գործերն են թագավորում, արժանանամ երանավետ այն ձայնին, թե «Ե՛կ, մտի՛ր տիրոջ ուրախության մեջ» (Մատթ. ԻԵ, 21): Նրան բոլոր գոյացություններից գոհունակությո՛ւն ու փա՛ռք այժմ և հավիտենաբար. ամեն:

...Գետնատարած խնդրում եմ սրբազաններիդ դասին, որ մեզ հիշման արժանացնեք և չանտեսեք իմ անեությունը, երբ հողացած լինեմ կորդացած գերեզմանում, այլ կհամարեք, որ ձեր աչքի առաջ մուրացկանի նման փեշս վեր բռնած՝ շառագունած դեմքով ու տանջված երեսով ձեզանից ողորմության փշրանքներ եմ խնդրում, այսինքն՝ ուզում եմ, որպեսզի մեկ անգամ երկնային գոհաբերությանն արժանի անեք: Եվ եթե սրա մեջ ինչ-ինչ սխալմունքներ կամ պակասություններ գտնեք, հիվանդագին մտքով չպախարակեք, որովհետև մարդկային էությանը հատուկ է սայթաքել ու տկարանալ խոսքերի և գործերի մեջ, այլ ողջախոհ կամքով ու աստվածավայելույ՜ս սիրով պիտի ներեք՝ մեզ բաշխելով մեր հանցանքները: Եվ դուք բոլորդ ողորմած աստծուց մեկի դիմաց բյուրապատիկ ողորմություն կգտնեք՝ երկրորդ կյանքով: Միաժամանակ պատվիրում եմ բոլոր նրանց, ովքեր պիտի հանդիպեն այս գրքին՝ սրա բովանդակությունից ոչինչ չանջատել կամ շարադրանքի կարգը չայլանդակել կամ անամոթաբար թուղթ չպոկել սրանից՝ նախանձից, նենգությունից կամ ուրիշ պատճառով: Իսկ եթե մեկը լրբաբար հանդգնի [այդպիսի բան անել], ջնջվա՛ծ լինի կյանքի գրքից, զրկվա՛ծ լինի հավիտենական կտակից, Հուդայի ու [Քրիստոսին] իսաչ բարձրացնողների հետ վարձատրվի, սատանայի ու բոլոր չարագործների հետ դատապարտվի: Եվ ով որ սա ընդօրինակի ու մյուս [մասերի] հետ դնի նաև այս համառոտ հիշատակարանը, մեզ հետ միասին աստծու արարչական սիրուց ողորմություն ստանա՝ թե՛ մարմնով կենդանի ժամանակ և թե՛ գերեզմանում ու երեկո չունեցող այն մեծ օրը: Փա՛ռք աստծուն բոլոր արարածներից ու գոհունակությո՛ւն՝ երկնավորների բոլոր բանակներից անվախճան հավիտենության շարունակվող ժամանակներում. ամեն՛ն:

## ԱՆԵԾՔԻ ՆՄՈՒՇՆԵՐ

*[ԼԻՊԱՐԻՏԻ ՈՐԴԻ ՍՍԲԱՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ]*

Արդ՝ եթե մեկը՝ մերոնցից կամ օտարներից, ավագներից կամ շարքային պաշտոնյաներից, մեր այս հիշատակը ջանա խափանել և որևէ պատճառով մտածի հակառակվել կամ հափշտակել, աստծու ամենաստեղծ հրամանով, անլուծելի անեծքներով Բելիարի ու իր սերնդի և օձի հետ նգովված լինի, առաքյալներից, մարգարեներից, հայրապետներից, նահատակներից ու սուրբ հրեշտակներից մերժված և անհիծված լինի, Կայենի, Քամի, Կորխի և Դաթանի ու Աբիրոնի, Հեզագեի և Գեեզի, Հուդայի և Արիոսի, դավաճան Վասակի հետ դատապարտվելով՝ անշեջ հրով պատժվի իր որդիներով. նրա անունն ու հիշատակը ջնջված լինեն աշխարհից. նա մեր մեղքերին պարտական լինի: Իսկ կատարողներն օրհնված լինեն: Եվ եթե մահմեդական իշխանություն փոխարինի և խափանել ջանա, աստծուց ու իր փեղամբարից մերժված լինի, և նրա օրինականն իր համար անօրինական լինի: Երկինքը նրա [վրա] կրակ մաղի, հողը նրան փուշ բերի, և նա իր որդիներով ու տոհմով ջնջվի կյանքից. ամեն՝ն:

*[ՏԱՐՍԱՅԻՃԻ՝ ՏԱԹԵՎԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՍՅԱՆ ՎՐԱ ԱՐԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ]*

Արդ՝ մեզանից հետո յուրայիններից կամ օտարներից որևէ իշխան կամ հարկահան պաշտոնյա եթե այս հաստատ պայմանն ու որոշումը խախտել ջանա կամ մտադրվի հիշյալ գյուղերը կամ այգիները այս եկեղեցուց խլել, Հուդայի և Քրիստոսին խաչ հանած մյուսների բաժինն ունենա, Կայենի ու բոլոր չարագործների պատիժներն ստանա, երեք սուրբ ժողովներից էլ նգովված լինի: Եվ եթե մահմեդական ղեկավար փոխարինի ու հափշտակել ջանա, աստծուց և իր փեղամբարից նգովված լինի, սատանայի հետ դժոխքն իջնի, տնով և սերունդներով ջնջվի և անհետանա. իր օրինականն ապօրինի դառնա, հազար-հազար նալլաթի արժանանա... Արդ՝ ինձանից հետո իմ զավակներից, թոռներից կամ այլ իշխողներից որևէ մեկը եթե մտադրվի զրկել մեր հոգիները, ջանա խափանել մեր հույսը, քանդել մեր սահմանածը, երեք հարյուր տասնութ հայրապետներից նգովված լինի՝ մեռած, թե կենդանի ժամանակ, զրկված ու ջնջված լինի այս և հանդերձյալ կյանքից. ամեն՝ն:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ----- 5

A FEW WORDS ----- 7

### ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՑԱՆ

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ «ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑԻ» ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ----- 8

### ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ

ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ----- 27

### ՊԱՐՈՒՅՐ ՍԱՀԱԿՅԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ ----- 54

### ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ

«ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ» ԵՐԿԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻՑ ----- 77

ՀԱՏՎԱԾՆԵՐ ՍԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ

«ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻՑ ----- 95